

**ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ
ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**
Հունարեն բնագրի համեմատությամբ*

Բանալի բառեր – ներկա ստորադասական, աորիստ ստորադասական, դասական հայերեն, եղանակային հակադրություն, կերպային հակադրություն, համատեքստախմաստային վերլուծություն, ժխտում, սկզբնական դրություն, տարաժամանակյա միտում:

Մուտք

Այժմ լայնորեն ընդունված տեսակետի համաձայն՝ հին հայերենն ունեցել է բայական երեք եղանակ՝ սահմանական, հրամայական և ստորադասական¹: Սրանցից սահմանականի և հրամայականի եղանակային կարգավիճակը որևէ առարկություն չի հարուցում: Մինչդեռ ստորադասականի վերաբերյալ հայերենագիտության մեջ մինչ օրս միասնականություն չկա: Եվրոպացի հայերենագետները (և նրանց հետևողությամբ որոշ հայ լեզվաբաններ) ներկայի և աորիստի (անցյալ կատարյալի) հիմքերից կազմված ստորադասականի ձևերը համապատասխանաբար բնորոշում են որպես *ներկա ստորադասական* և *աորիստ ստորադասական*², դրանց վերագրելով *անկատար-կատարյալ* կերպային հակադրություն²: Մինչդեռ հայ քերա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.11.2022:
1 Ավելի վաղ գրաբարի քերականները դերբայները ևս դիտում էին իբրև առանձին եղանակ, որն ակնհայտորեն անընդունելի մոտեցում է, ուստի հարկ չենք համարում անդրադառնալ դրան:
2 Տե՛ս, օրինակ, Meillet A., Altarmenisches Elementarbuch, Heidelberg: Carl Winters Univeritätsbuchhandlung, 1913, էջ 92-107, Առյճի Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, 2nde éd., Vienne:

Վէմ համահայկական հանդես, ԺԴ (Բ) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

կանագիտության մեջ այժմ ընդունված են *ստորադասական 1-ին ապառնի* և *ստորադասական 2-րդ ապառնի* անվանումները: Իսկ ավելի վաղ գրաբարի քերականները աորիստ ստորադասականը դիտում էին իբրև սահմանական եղանակի ապառնի՝ բուն ստորադասական համարելով միայն ներկա ստորադասականը³: Ըստ այդմ՝ հին հայերենի ստորադասականի վերոնշյալ երկու ձևերի (օր.՝ *գրիցեմ – գրեցից*) իմաստային փոխհարաբերությունը ընդհանուր առմամբ բնորոշվում է կա՛մ որպես կերպային հակադրություն (*անկատար կերպ–կատարյալ կերպ*), կա՛մ որպես եղանակային հակադրություն (ստորադասական–սահմանական): Սույն հոդվածում փորձ է արվում ցույց տալ, որ տվյալ դեպքում ենթադրյալ եղանակային հակադրությունը չի հաստատվում հին հայերենի համաժամանակյա և տարաժամանակյա տվյալներով: Մյուս կողմից՝ սկզբնական կերպային հակադրությունը արդեն դասական հայերենում ստորադասական եղանակի պարագայում այլևս չէր գիտակցվում որպես գործուն օրինաչափություն, ուստի չէր դրսևորվում հետևողականորեն:

1. Հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականների եղանակային տարբերակման փորձերը հայերենագիտության մեջ

Ստորադասականի վերոնշյալ երկու տիպերի եղանակային տարբերակման հարցում ևս որոշ տարակարծություններ կան, և կարելի է առանձնացնել երեք հիմնական մոտեցում.

1. Գրաբարի մի շարք ուսումնասիրողներ ներկայի և աորիստի հիմքերից կազմված ստորադասականների (այն է՝ 1-ին կամ ներկա ստորադասականի և 2-րդ կամ աորիստ ստորադասականի) միջև իմաստագործառության էական տարբերություն չեն տեսնում: Այսպես՝ Ա. Բագրատունին, թեև աորիստ ստորադասականը դիտում է իբրև սահմանական եղանակի ապառնի, իսկ ներկա ստորադասականը՝ իբրև ստորադասական եղանակ, այդուհանդերձ, դրանց

Imprimerie des PP. Mekhitharistes, 1936, էջ 123, **Jensen H.**, Altarmenische Grammatik, Heidelberg: Carl Winter. Universitätsverlag, 1959, էջ 91-100, 114-118, **Godel R.**, An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag, 1975, էջ 37-38, **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, Ա գիրք, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 60-61:
 3 Հմնտ. **Ավետիսյան Հ.**, Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1985, N 1, էջ 193-204:

նշանակությունները երկու դեպքում էլ ներկայացնում է նույն կերպ՝ արևմտահայերենի ստորադասական եղանակի և *պիտի*-ով սահմանական ապառնի միջոցով, օր.՝ *սիրեցից – սիրեմ, պիտի սիրեմ և սիրիցեմ – սիրեմ, պիտի սիրեմ* և այլն⁴: Բացի այդ՝ նա նշում է, որ «յամենայն իսկ բայս ապառնիք և ստորադասականք (այն է՝ 1-ին ստորադասականը և 2-րդ ստորադասականը – Ս. Ա.) բազում ուրեք վարին ի տեղի միմեանց, և ի տեղի հրամայականի, և արգելականի *մի՛* մակբայի. որպէս, *Ջի մի մեռանիցիմք և երկիրս աներիցի. Ջի մի մեռցուք և երկիրս մեր աներեսցի...*»⁵: Իսկ Մ. Աբեղյանը, ընդունելով, որ 1-ին և 2-րդ ապառնիները (ստորադասականները) սկզբնապես միմյանց հակադրվել են կերպային իմաստով, միևնույն ժամանակ նկատում է, որ դրանք նույնիսկ հնագույն մատենագիրների աշխատություններում արդեն շփոթված են և հաճախ նույն նշանակությունն ու գործածությունն ունեն⁶: Ուստի նա գտնում է, որ նշանակության տեսանկյունից 1-ին և 2-րդ ապառնիները «տեղին նայելով՝ համապատասխան են աշխարհաբարի 1. Սահմ. ապառնի, 2. Ըղծական ապառնի, 3. Ենթադրական ապառնի և 4. Հարկադրական ապառնի ժամանակներին. *գնայցեմ, գնացից = գնալու եմ, գնամ, կգնամ, պիտի գնամ*»⁷: Այլ լեզվաբաններ, դարձյալ նշելով 1-ին և 2-րդ ստորադասականների իմաստագործառության նույնականությունը, ի տարբերություն Մ. Աբեղյանի, դուրս են թողնում սահմանական ապառնի իմաստը՝ գտնելով, որ այդ երկու ապառնիները նշանակությամբ համապատասխանում են արդի հայերենի ըղծական, ենթադրական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակներին, ըստ այդմ՝ *գնայցեմ, գնացից = գնամ, կգնամ, պիտի գնամ*⁸:

2. Գրաբարի որոշ քերականներ փորձում են հստակ սահմանագատել 1-ին և 2-րդ ստորադասականները եղանակային տեսանկյունից՝ առաջինի իմաստը ներկայացնելով արևմտահայերենի ստորադասական եղանակի (*նէ* մասնիկով կամ առանց դրա), իսկ երկրորդինը՝ արևմտահայերենի *պիտի*-ով սահմանական ապառնի միջո-

4 Տե՛ս **Բագրատունի Ա.**, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, հրատ. Ս. Ղազար, 1852, էջ 131-168՝ բայի խոնարհման տախտակները:

5 Նույն տեղում, էջ 188:

6 Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 747:

7 Նույն տեղում:

8 Տե՛ս **Շարաբխանյան Պ.**, Գրաբարի դասընթաց, Եր., ԵՊՀ հրատ., 1974, էջ 178-179, 187, **Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.**, Գրաբարի ծնունդը, Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 22, 35:

ցով, ինչպես՝ *սիրիցեմ – սիրեմ, սիրեցից – պիտի սիրեմ, հայրանիցեմ – կտրեմ, հայրից – պիտի կտրեմ*⁹, *շարժիցեմ – շարժեմնէ* կամ *շարժելու ըլլանէ, շարժեցից – պիտի շարժեմ*¹⁰:

3. Հին հայերենի այլ հետազոտողներ կարծում են, որ 1-ին և 2-րդ ստորադասականների միջև եղանակային հակադրությունը մասնակի բնույթ է կրում, քանի որ 2-րդ ստորադասականը գործածվում է ոչ միայն սահմանական ապառնի, այլև 1-ին ստորադասականի նշանակություններով: Ըստ այդմ՝ նշվում է, որ 1-ին ստորադասականը իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին, իսկ 2-րդ ստորադասականը՝ արդի հայերենի սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին, օր.՝ *շարժիցեմ – շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ* և *շարժեցից – շարժելու եմ, շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ* և այլն¹¹: Չալրիսյան-Այտընյանի հայտնի քերականության մեջ ևս 1-ին և 2-րդ ստորադասականներին իմաստագործառության մասնակի տարբերություն է վերագրվում, որը, սակայն, ճիշտ չէր լինի բառիս բուն իմաստով եղանակային հակադրություն անվանել: Այսպես՝ թեև Վ. Չալրիսյանը և Ա. Այտընյանը 1-ին և 2-րդ ստորադասականներն ավանդույթի ուժով տարբերակում են եղանակային տեսանկյունից՝ առաջինը դիտելով որպես ստորադասական եղանակ, իսկ երկրորդը՝ սահմանական ապառնի, այդուհանդերձ գտնում են, որ ապառնին երեք հիմնական գործառություն ունի՝ 1. բուն ապառնիի նշանակությամբ (որն իմաստով համագոր է դիտվում *-լոց (-ոց)* բաղադրյալ ապառնիին), 2. իբրև հրամայական և արգելական (հատկապես 1-ին և 3-րդ դդ. հրամայականի և արգելականի ձևերի պակասը լրացնելու համար), 3. ստորադասականի իմաստով (մանավանդ *զի, թէ* շաղկապների հետ)¹²: Միևնույն ժամանակ նշվում է, որ «ստորադասական

9 Տե՛ս **Գարագաշեան Ա. Մ.**, Գործնական քերականություն հայ լեզուի, Կ. Պոլիս, տպ. Յ. Գավաճեան, 1876, էջ 54-55, 60-61, 70-71, 77-78-ի բայի խոնարհման տախտակները, **Ուլյնի** Համառօտ նոր քերականություն, ուղղեալ եւ յաւելեալ, Կ. Պոլիս, տպ. Մ. Յ. Փափագեան, 1892, էջ 52-93:

10 Տե՛ս **Աւետիքեան Գ.**, Քերականություն հայկական, Վենետիկ, հրատ. Ս. Ղազար, 1815, էջ 67-68:

11 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., «Լույս» հրատ., 1976, էջ 121-122, 143-145, **Խաչատրյան Լ., Թոսունյան Գ.**, Գրաբարի դասագիրք, Եր., «Ջանգալ-97» հրատ., 2004, էջ 173, **Համբարձումյան Վ.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2018, էջ 201 հջ., 222 հջ.: Հմնտ. նաև **Հովհաննիսյան Լ.**, Ղասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, «Լեզվի և ոճի հարցեր», պր. III, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 299-309:

12 Տե՛ս **Չալրիսեան Վ., Այտընեան Ա.**, Քերականություն հայկազեան լեզուի հանդերձ փոփոխմամբք եւ յաւելուածովք, Կիեննա, Մխիթարեան տպարան, 1985, էջ 368-371:

ներկայի տեղ սահմ. ապառնի՝ բառական յաճախ կը գործածուի, մա-
 նաւանդ՝ *որ, եթէ, թերեւս, մինչեւ* բառերէն ետեւ. եւ աւելի՝ (*որպէս*)
զի շաղկապով, որուն քով աւելի սովորական է ապառնի, քան ստո-
 րադասական»¹³: Մյուս կողմից՝ նույն քերականության հեղինակները
 ընդունում են, որ «ստորադասականն ապառնույն գրեթէ ամէն կերպ
 գործածութիւնն ունի, – միայն ապառնույն իբրեւ հրամայական գոր-
 ծածութիւնն ստորադասականին բնական չէ, եւ զգուշալի է...»¹⁴:
 Իսկ մեկ այլ ձևակերպմամբ՝ «Զգուշալի է այս հրամայական
 ապառնույ (այն է՝ 2-րդ ստորադասականի – Ս. Ա.) տեղ ստորադա-
 սական (այն է՝ 1-ին ստորադասական – Ս. Ա.) գործածել. *յրեսանիցէ՛*
 փխկ *յրեսցէ՛*. *ելանիցեն՛ք* փխկ *ելցո՛ւք* եւ այլն: – Միայն արգելականը
 սովորաբար ստորադասական կը դրուի. Մի՛ երթայցէք զհետ... Մի՛
 խոռվիցիք: Առանց իրաւանց մի՛ ինչ առնիցես: (Փխկ՝ մի՛ երթիջիք...,
 խոռվեսջիք, արասցես, եւ այլն:))»¹⁵: Այսպիսով՝ Վ. Չալըխյանը և Ա.
 Այտընյանն ընդհանուր առմամբ գտնում են, որ ապառնին (2-րդ
 ստորադասականը) և ստորադասականը (1-ին ստորադասականը)
 հանդէս են գալիս գրեթէ նույն իմաստային գործառնություններով և
 միմյանցից տարբերվում են հիմնականում միայն հրամայականի և
 արգելականի իմաստներով կիրառվելիս. վերջին դեպքում հրամա-
 յականի նշանակությամբ սովորաբար կամ մեծ մասամբ ապառնի է
 գործածվում, իսկ արգելականի նշանակությամբ՝ ստորադասական:
 Մեր կարծիքով՝ նշված կիրառական տարբերությունը չի կարող բա-
 ցատրվել այդ ձևերին ավանդաբար վերագրվող սահմանական–ստո-
 րադասական եղանակային հակադրությամբ, այլ նրանց սկզբնա-
 կան կերպիմաստային տարբերությամբ պայմանավորված գործա-
 ռութային հետագա սահմանափակման արդյունք է, որը, ի դեպ,
 նկատելի է հին հայերենի նաև բուն հրամայականի և արգելականի
 պարագայում (որտեղ այն արդեն դարձել է անխախտ օրինաչա-
 փություն): Այսինքն՝ դրական հրահանգն արտահայտվում է աորիս-
 տի հիմքից կազմված, իսկ ժխտական հրահանգը (արգելանքը)՝
 ներկայի հիմքից կազմված ձևի միջոցով. հմնտ. բուն հրամ. *սրա-*
ցի՛ր – արգել. հրամ. *մի՛ սրանսար, սիրեցէ՛ք* – *մի՛ սիրէք, բազմեա՛ց* –
մի՛ բազմիր և այլն: Նկատենք, սակայն, որ Չալըխյան–Այտընյանի

13 Նույն տեղում, էջ 370:

14 Նույն տեղում, էջ 375:

15 Նույն տեղում, էջ 369-370:

քերականության մեջ տվյալ դեպքում դիմային տարբերակում չի կատարվում, ուստի *հրամայական/արգելական* ասելով հեղինակները հավասարապես նկատի ունեն *հրամայականի/արգելականի* իմաստով գործածված ստորադասականի ինչպես 2-րդ դ., այնպես էլ 3-րդ դ. և հոգ. 1-ին դ. ձևերը (հմմտ. վերը մեջբերված հատվածի համապատասխան օրինակները): Բայց կոնկրետ 3-րդ դեմքի պարագայում, ինչպես կոտեսնենք հետագա շարադրանքում, 2-րդ ստորադասականը ընդհանուր առմամբ գերակշռում է թե՛ դրական հրամայականի և թե՛ արգելականի նշանակությամբ գործածություններում, թեև 1-ին ստորադասականը ևս հանդիպում է երկու դեպքում էլ:

Ստորադասականի երկու ձևերի կերպային հակադրության հարցը Աստվածաշնչի փաստական նյութի հիման վրա հանգամանորեն դիտարկելու ենք ստորև: Իսկ մինչ այդ կուզենայինք անդրադառնալ դրանց իմաստագործառության լեզվաբանության վերաբերյալ նաև Լ. Հովհաննիսյանի տեսակետին: Նա ևս ընդունում է, որ ստորադասական 2-րդ ապառնին, ի տարբերություն ստորադասական 1-ին ապառնիի, ունի նաև սահմանական ապառնիի գործառություն¹⁶: Միննույն ժամանակ, կատարելով 1-ին և 2-րդ ապառնիների (ստորադասականների) կիրառական առանձնահատկությունների քննություն, գործառական որոշակի սահմանափակումներ է նշում 1-ին ստորադասականի համար: Մասնավորապես՝ պատմողական (ոչ հարցական և ոչ հրամայական/արգելական) խոսքի դեպքում 1-ին ստորադասականը, ըստ Լ. Հովհաննիսյանի, չի հանդիպում բարդ համադասական նախադասության բաղադրիչ բոլոր պարզ նախադասություններում միաժամանակ (այլ հանդես է գալիս միայն 2-րդ ստորադասականի առկայության պարագայում), ինչպես նաև առանձին պարզ նախադասության մեջ, որտեղ դրվում է միայն 2-րդ ապառնի¹⁷: Մյուս կողմից՝ նա հակադրվում է գրաբարի որոշ քերականների այն պնդմանը, որ *զի, որ, յորժամ, եթէ, թէ* շաղկապներից հետո հիմնականում 1-ին ապառնի (ստորադասական) է գործածվում, և վիճակագրական հաշվումներով ցույց է տալիս, որ ոչ միայն երկու ապառնիներն էլ հավասարապես կիրառվում

16 Տե՛ս Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 306:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 303-306:

են այդ շաղկապներից հետո, այլև 2-րդ ապառնին երբեմն նույնիսկ ավելի հաճախադեպ է¹⁸: Ու թեև Լ. Հովհաննիսյանը վերջում եզրակացնում է, որ դասական գրաբարում երկու ապառնիների միջև իմաստային խոր հակադրություն չկա, բայց գտնում է, որ նախադասական ինչ-որ շրջանում այդպիսի հակադրություն եղել է¹⁹: Ըստ այդմ՝ երկու ապառնիներից «յուրաքանչյուրն ունեցել է իր բնորոշ իմաստային ու գործառական կողմերը, և նախադասական ինչ-որ շրջանում է, որ հստակորեն է արտահայտվել սահմանական եղանակի (*գրեցից*) և ստորադասական եղանակի (*գրիցես*) հակադրությունը»²⁰: Սակայն լեզվի հետագա զարգացման ընթացքում 1-ին և 2-րդ ապառնիների սահմաններն աստիճանաբար սկսել են խառնվել²¹: Մյուս կողմից՝ Լ. Հովհաննիսյանը նախադասական ինչ-որ շրջանում 1-ին և 2-րդ ապառնիների միջև նաև կերպային (տևական-ոչ տևական և անկատար-կատարյալ) հակադրություն է տեսնում՝ ընդունելով, որ «նախադասական ինչ-որ շրջանում, անշուշտ, այդ երկու ժամանակների հիմնական տարբերությունները եղել են կերպային... Առաջին ապառնուն բնորոշ են եղել տևական և մասամբ անկատար կերպերը, իսկ երկրորդ ապառնուն՝ ոչ տևական և կատարյալ կերպերը: Նշենք նաև, որ տևականություն-ոչ տևականությունը ավելի ակնառու է արտահայտվում, քան կատարյալություն-անկատարությունը»²²: Նա իհարկե չի պարզաբանում՝ արդյոք երկու ապառնիների միջև եղանակային և կերպային հակադրությունները նախադասական շրջանում գործել են համաժամանակյա միևնույն կտրվածքում, թե՞ ժամանակագրորեն հաջորդել են միմյանց: Բայց նկատենք, որ հայերենի դասական շրջանի համար Լ. Հովհաննիսյանը, ըստ էության, ընդունում է միաժամանակյա կերպաեղանակային (և՛ կերպային, և՛ եղանակային) հակադրություն, թեև գտնում է, որ երկու ստորադասականների գործառական սահմաններն արդեն որոշակիորեն խառնված էին: Նա այդ կերպաեղանակային հակադրության վերաբերյալ մասնավորապես գրում է. «...1. **Գրիցես** – **գրեցից**: Կերպային հակադրություն կա: Երկու ապառնիների գործառական շատ ընդհանրություններ պայմանավորում են նշված ժամա-

18 Տե՛ս նույն տեղում, 301-302:
 19 Տե՛ս նույն տեղում, էջ 307, 316:
 20 Նույն տեղում, էջ 307:
 21 Տե՛ս նույն տեղում:
 22 Նույն տեղում, էջ 316:

նակների եղանակային ընդհանրությունը: Սակայն նրանք նաև հակադրվում են որպես տարբեր եղանակների ժամանակներ, քանի որ, ի տարբերություն առաջին ապառնու, **գրեցից**-ը կատարում է նաև սահմանական ապառնու գործառնություն»²³:

Մեր կարծիքով՝ դասական հայերենում բավարար լեզվական փաստեր չկան, որոնք կարող են վկայել 1-ին և 2-րդ ստորադասականների ենթադրյալ եղանակային հակադրության օգտին: Ինչ վերաբերում է ստորադասականի երկու ձևերի՝ Լ. Հովհաննիսյանի մատնանշած կիրառական առանձնահատկություններին (այն է՝ որոշակի շարահյուսական համատեքստերում 1-ին ստորադասականի գործառնության սահմանափակումներին), դրանք նախ՝ չեն կարող որևէ առնչություն ունենալ 1-ին և 2-րդ ստորադասականների ո՛չ ենթադրյալ եղանակային, ո՛չ էլ կերպային հակադրության հետ: Եվ մյուս կողմից՝ այդ գործառնական տարբերությունները, մեր դիտարկումների համաձայն, ոչ թե բացարձակ, այլ ընդամենը վիճակագրական (քանակական) բնույթ ունեն: Այսինքն՝ 1-ին ստորադասականը ևս 2-րդ ստորադասականի նման (թեև ոչ նույնքան հաճախադեպ) սկզբունքորեն կարող է հանդես գալ նաև պատմողական խոսքի բարդ համադասական նախադասության բոլոր բաղադրիչ պարզ նախադասություններում միաժամանակ: Բացի այդ՝ 1-ին ստորադասականի ձևերը սահմանական ապառնիի իմաստով գործածվում են նաև ինքնուրույն պարզ նախադասության մեջ²⁴: Հետևաբար հին հայերենում ստորադասականի երկու տիպերը սկզբունքորեն կարող են միմյանց փոխարինել գրեթե բոլոր կիրառություններում: Իսկ որոշ գործառնությունների դեպքում 1-ին ստորադասականի համեմատաբար քիչ գործածական լինելը պետք է բացատրել վերջինիս գործառնության սահմանափակման տարածմանակյա ընդհանուր միտումով: Այլ կերպ ասած՝ թեև գրաբարյան ստորադասականի երկու տիպերն էլ, ինչպես հայտնի է, հայերենի հետագա զարգացման ընթացքում ի վերջո դուրս են մղվել լեզվից՝ փոխարինվելով գրաբարյան սահմանական ներկայի ձևերով²⁵, բայց մինչ

23 Նույն տեղում:

24 Համապատասխան բնագրային օրինակների համար տես **Ավետյան Ա.**, Ղասական հայերենում ստորադասականի երկու ձևերի իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ, «Պատմություն և մշակույթ», Եր., 2022, N 2, էջ 150-165:

25 Ըստ Յ. Կարստի միջին հայերենում «հին ստորադասականի և ապառնիի (այն է՝ 1-ին ստորադասականի և 2-րդ ստորադասականի – Ս. Ա.) միայն առանձին հետքեր են հանդիպում կայուն բանա-

այդ 1-ին ստորադասականն սկսել է աստիճանաբար իր տեղը զիջել 2-րդ ստորադասականին, ինչը, ի դեպ, ընդունում է նաև Լ. Հովհաննիսյանը²⁶: Ուստի մենք հակված ենք կարծելու, որ որոշ կիրառություններում այդ սահմանափակման միտումը համեմատաբար ավելի վաղ և ավելի մեծ չափով է գործել, քան մյուսներում, և, ըստ այդմ, արդեն դասական հայերենում 1-ին ստորադասականի վերոնշյալ մասնակի գործառությանին սահմանափակումները նույնպես դրա արդյունք են:

2. Հին հայերենի ստորադասականի երկու տիպերի կերպային հակադրության քննություն

Ինչպես ստորև կտեսնենք, 1-ին և 2-րդ ստորադասականների կիրառությունների համատեքստիմաստային քննությունը երևան է հանում այդ ձևերի կերպային հակադրության բազմաթիվ անհերքելի դեպքեր: Բայց մինչ դա ցույց տալը Լ. Հովհաննիսյանի նշած *ոչ տրևական-տրևական* և *անկատար-կատարյալ* կերպային հակադրությունների վերաբերյալ կուզենայինք ասել հետևյալը: Կերպի քերականական կարգի ընդհանուրլեզվաբանական արդի ըմբռնմամբ՝ տևականություն-ոչ տևականությունը և անկատարություն-կատարյալությունը ոչ թե միմյանցից անկախ երկու տարբեր կերպային հակադրություններ են, այլ տևականություն-ոչ տևականությունը և անավարտություն-ավարտվածությունը միասին *անկատար-կատարյալ* կերպային հակադրության բնորոշ հատկանիշներն են: Ընդ որում, անկատար կերպի ներսում տարբերակում են *կոնկրետ ընթացքային տրևականություն* կամ *ընթացքայնություն*, որը դրսևորվում է ընթացքային կերպի (progressive aspect) միջոցով՝ ցույց տալով կատարման անմիջական ընթացքի մեջ գտնվող գործողություն, և *ընդհանրական տրևականություն*, որը դրսևորվում է սովորության կերպի (habitual aspect) միջոցով և ցույց է տալիս մի որոշակի տևական ժամանակահատվածում սովորաբար, պարբերաբար տեղի ունեցող

ծներում և որպես հնաբանություններ» (Karst J., Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg: Verlag Von Karl J. Trübner, 1901, S. 299):
26 Հմմտ. Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 307:

գործողություն/եղելություն²⁷: Այսպես՝ հին հայերենում անկատար կերպի կոնկրետ ընթացքային տևականությունը (կամ ընթացքային կերպի իմաստը) կարելի է լուսաբանել հետևյալ օրինակով²⁸. Իմնտ. «Ապա եթո՛ղ զնա Սապրանայ. և ահա՛ հրեշտակս մալրեան՝ և պաշտէին զնա» (Մատթ., 4:11)²⁹: Ակնհայտ է, որ այստեղ *եթո՛ղ* և *մալրեան* աորիստի ձևերը ավարտուն և ոչ տևական կատարյալ կերպի իմաստ են արտահայտում, իսկ *պաշտէին* անցյալ անկատարի ձևը՝ կոնկրետ ընթացքային տևականություն և անկատար կերպի անավարտ գործողություն: Այլ կերպ ասած՝ թեև բերված օրինակում երեք բայաձևերն էլ մեկանգամյա, կոնկրետ գործողություններ են ցույց տալիս, սակայն սատանայի թողնել-հեռանալը և հրեշտակների մոտենալը ավարտուն գործողություններ են, մինչդեռ հրեշտակների՝ Հիտուսին ծառայելու գործողությունը դիտարկվում է անմիջական կատարման ընթացքի մեջ, հետևաբար դեռևս անավարտ եղելություն է: Նշենք նաև, որ հունարեն բնագրում *եթո՛ղ* ձևի դիմաց սահմանական ներկա է՝ պատմական ներկայի իմաստով, *մալրեան* ձևի դիմաց՝ աորիստ, և *պաշտէին* ձևի դիմաց՝ իմպերֆեկտ (անցյալ անկատար). «...tote **aphiēsīn** auton ho diabolos kai idou angeloi **prosēlthon** kai **diēkonoun** autō» – «...այն ժամանակ **թողնում է <թողեց>** նրան սատանան, և հրեշտակները **մոտեցան** և **ծառայում էին** նրան»³⁰: Իսկ անկատար կերպի ընդհանրական տևականություն (կամ սովորության կերպի իմաստ) է արտահայտված, ասենք, հետևյալ նախադասության մեջ. «Եւ սաւէ ցՍիմովն Յիսուս. Մի՛ երկնչիր՝ յայսմ հեարէ զմարդի՛կ որսայցես ի կեանս» (Ղուկաս, 5:10): Հունարենում *որսայցես ի կեանս* արտահայտության դիմաց *օժանդակ բայ* +

27 Հմնտ. Ավետյան Ա., Անգլերենի ժամանակային հարաբերակցության կարգի և հայերենի ոչ իրարական ժամանակի (ենթա-)կարգի զուգադրական քննություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Եր., 2015, N 1 (16), էջ 38-40:

28 Ինչպես հայտնի է, հին հայերենում *անկատար-կատարյալ* կերպային հակադրություն էր դրսևորվում ոչ միայն 1-ին և 2-րդ ստորադասականների, այլև անցյալ անկատարի և աորիստի միջև (տե՛ս Meillet A., Altarmenisches..., էջ 107, Jensen H., նշվ. աշխ., էջ 114-117):

29 Այստեղ և հետագա շարադրանքում հայերեն օրինակները բերվում են հ. Հովհաննես Ջոհրայան (Յովհաննես Ջոհրայան) վարդապետի աշխատասիրությամբ 1805 թ. Վենետիկում տպագրված Աստվածաշնչի տեքստից, որն իրավամբ համարվում է Աստվածաշնչի գիտական հրատարակություն և տողատակի ծանոթագրություններում տալիս է տարբեր ձեռագրերում ու մինչ այդ եղած հրատարակություններում հանդիպող տարբերակային ձևերն ու տարընթերցումները՝ «*Բագունք*. Ոճանք» և նման վիճակագրական բնորոշումներով հանդերձ:

30 Այստեղ և հետագա շարադրանքում հունարեն բնագրից մեջբերված հատվածների արդի արևելահայերեն թարգմանությունը մեր հեղինակայինն է: Ընդ որում, անհրաժեշտության դեպքում հունարեն ձևերը նախ թարգմանվում են բառացի, իսկ այնուհետև սուրանկյուն փակագծերում <>, տրվում է այն իմաստը, որը, մեր կարծիքով, նկատի է առնված տվյալ պարագայում:

ներկա դերբայ վերլուծական նկարագրական կառույց է՝ դրված ապանի ժամանակաձևով՝ *esē zōgrōn* «ողջ որսացող կլինես <կորսաս ողջ-ողջ>» (< *zōgreō* «ողջ բռնել, որսալ և ողջ պահել» բայից)։ «...*Mē phobou apo tou nyn anthrōpous esē zōgrōn*» – «...Մի՛ վախեցիր. այժմվանից մարդիկ **կորսաս ողջ-ողջ**»։ Ակնհայտ է, որ այստեղ խոսքը ոչ թե մեկանգամյա և ավարտուն, այլ տևական և պարբերաբար կատարվելիք, հետևաբար անկատար (սովորությանին) կերպի գործողության մասին է։ Արդ, պատահական չէ, որ ռուսերեն թարգմանության մեջ տվյալ դեպքում անկատար կերպի ապանի է գործածված «...И сказал Симону Иисус: не бойся; отныне **будешь ловить** человеков»:

Դասական հայերենում 1-ին և 2-րդ ստորադասականների կիրառությունների համատեքստաինաստային քննությունը որևէ կասկած չի թողնում, որ ստորադասականի այդ երկու տիպերը սկզբնապես միմյանց հակադրվել են կերպային (*անկատար կերպ-կատարյալ կերպ*) իմաստով, և շատ հաճախ դեռ հստակ դրսևորվում է այդ կերպային հակադրությունը³¹, օրինակ՝ «*Կին յորժամ ծնանիցի՝ րրբմութիւնն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանունն, ո՛չ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մա՛րդ յաշխարհ*» (Յովհ., 16:21): Բերված օրինակում հին հայերենի *ծնանիցի* անկատար կերպի ներկա (կամ 1-ին) ստորադասականի և *ծնցի* կատարյալ կերպի աորիստ (կամ 2-րդ) ստորադասականի դիմաց հունարենում նույնպիսի կերպային ձևեր են. հմմտ. մի կողմից՝ «...*hē gynē hotan tiktē*...» – «...կին յորժամ **ծնանիցի**...» «...կինը երբ որ **ծննդաբերելիս է լինում**...»), մյուս կողմից՝ «...*hotan de gennēsē to paidion ouketi mnēmoneuei*...» – «...այլ յորժամ **ծնցի** զմանունն, ո՛չ ևս յիշէ...» («...իսկ երբ երեխային **ծնում է** <**վերջացնում**>, այլևս չի հիշում...»): Կամ՝ «*Այլ եկեսցէ ժամանակ, և ա՛յժմ իսկ է. յորժամ ճճմարիտքն երկրպագութ՝ երկի՛ր պագանիցեն Հօր՝ հոգւո՛վ և ճճմարտութեամբ*» (Յովհ., 4:23): Կարծում ենք՝ տվյալ դեպքում գալու գործողությունը դիտվել է որպես մեկանգամյա, ավարտուն փաստ, ուստի դրված է կատարյալ կերպի (2-րդ ստորադասականի) ձևով, մինչդեռ երկրպագելու գործողությունը, որն ակնհայտորեն ենթա-

31 Տե՛ս նաև Meillet A., *Altarmenisches...*, էջ 107, **Արյանի** *Esquisse...*, էջ 123, Jensen H., նշվ. աշխ., էջ 117, **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 60-61:

դրում է տևական, շարունակական գործընթաց, արտահայտված է անկատար կերպի (1-ին ստորադասականի) ձևով: Արդ, ուշագրավ է, որ ռուսերեն թարգմանության մեջ երկրպագելու գործողությունը արտահայտված է դարձյալ անկատար կերպի ձևով (անկատար ապառնիով)՝ *будут поклоняться* «կերկրպագեն»: Ինչ վերաբերում է հունարեն բնագրին, *երկի՛ր պագանիցեն* ձևի դիմաց սահմանական ապառնի է (*proskynēsousin* «կերկրպագեն»), և, ինչպես հայտնի է, հունարենում սահմանական ապառնին *անկատար-կատարյալ* կերպային տարբերակում չունի: Իսկ *եկեցէ* ձևի դիմաց սահմանական ներկա է՝ մոտալուտ և անխուսափելի ապառնիի իմաստով՝ *erchetai* «գալիս է <կգա>»: Արդ, հայ թարգմանիչները վերջին դեպքում առաջնորդվել են բուն համատեքստային իմաստով՝ գործածելով կատարյալ կերպի ստորադասականի ձև՝ սահմանական ապառնիի նշանակությամբ: Իսկ ահա հաջորդ օրինակում նույն *երկիր պագանել* բայը երկու հարակից նախադասություններում ակնհայտորեն *անկատար-կատարյալ* կերպային հակադրություն է արտահայտում. հմմտ. «*Եւ մրցէ առաջնորդն ընդ ճանապարհ կամարի դրանն արքաքնոյ... և երկի՛ր պագցէ ՚ի վերայ սեւոց դրանն՝ և ելցէ. և դուռն մի՛ փակեացի մինչև ցերեկոյ: Եւ երկի՛ր պագանիցէ ժողովորդ երկրին առաջի մրից դրանն յաւուր շարաթուց՝ և յամսագլուխս՝ առաջի Տեանն*» (Եզեկիէլ, 46:2-3): Այստեղ առաջնորդի գործողությունները, այդ թվում՝ երկրպագելը, դիտվում են որպես ամբողջական, ավարտուն գործընթացներ: Եվ այլ կերպ չի էլ կարող լինել, քանի որ թվարկվում են իրար հաջորդող գործողություններ, ըստ այդմ՝ յուրաքանչյուր հաջորդող գործողություն ինքնին ենթադրում է նախորդող գործողության տրամաբանական ավարտ: Մինչդեռ ժողովրդի՝ Աստծուն երկրպագելը դիտվում է իբրև տևական գործընթաց, ուստի բայը դրված է անկատար կերպի (1-ին ստորադասականի) ձևով: Ի դեպ, ռուսերեն թարգմանության մեջ առաջին դեպքում կատարյալ կերպի ապառնի է կիրառված, իսկ երկրորդ դեպքում՝ անկատար կերպի ապառնի. հմմտ. «Князь **пойдет** через внешний притвор ворот... и он у порога ворот **поклонится** Господу и **выйдет**... И народ земли **будет поклоняться** пред Господом, при входе в ворота, в субботу и новомесячия»: Հունարենում *մրցէ, երկի՛ր պագցէ, ելցէ* և *երկի՛ր պագանիցէ* ձևերի դիմաց սահմանական

ապառնիի ձևեր են, որոնք տվյալ համատեքստում պատվիրական, հրահանգողական նշանակությամբ են գործածված ³² . «...kai eiseleusetai ho aphēgoumenos...» – «...և կաննի/պետք է մանի առաջնորդը...», «...proskynēsei...», «...կերկրպագի/պետք է երկրպագի...», «...exeleusetai...», «...դուրս կգա/պետք է դուրս գա...», «...kai proskynēsei ho laos...» – «...և կերկրպագի/պետք է երկրպագի ժողովուրդը...»:

Բայց եթե մի կողմից այս և նմանատիպ այլ օրինակներ համոզիչ կերպով վկայում են, որ ստորադասականի երկու տիպերը հին հայերենում իրոք *անկատար-կատարյալ* կերպային հակադրություն են արտահայտել, ապա մյուս կողմից քիչ չեն նաև այն դեպքերը, երբ 1-ին և 2-րդ ստորադասականները գրեթե նույնական իմաստային համատեքստում փոխարինում են միմյանց, կամ կերպային տեսանկյունից նույնատիպ գործողություններն արտահայտված են մե'րթ 1-ին, մե'րթ 2-րդ ստորադասականի միջոցով. հմմտ. մի կողմից՝ «*Եւ վաղվաղակի երթա՛յք սասցէ՛ք աշակերտացն նորա թէ յարեա՛ւ. և ահա՛ յառաջանա՛յ քան զձեզ ի Գալիլեա. ա՛նդ տեսանիցէք զնս*» (Մատթ., 28:7), մյուս կողմից՝ «*Յայնժամ սաէ ցնոսա Յիսուս. Մի՛ երկնչիք, երթա՛յք սասցէք եղբարցն ինոց՝ զի երթիցեն ի Գալիլեա՛ և ա՛նդ տեսցեն զիս*» (Մատթ., 28:10): Վերջին երկու օրինակներում 1-ին ստորադասականի *տեսանիցէք* և 2-րդ ստորադասականի *տեսցեն* ձևերով նկատի է առնված միևնույն մեկանգամյա և կոնկրետ (ոչ ընդհանրական) գործողությունը (որը երկու դեպքում էլ նույնական է ոչ միայն հասկացական իմաստով, այլև դրա իրագործման կերպիմաստային տեսանկյունից): Իսկ հետևյալ երկու օրինակներում հենց նույն նախադասության մեջ կերպիմաստային առումով ակնհայտորեն նույնատիպ գործողություններն արտահայտված են մի դեպքում 1-ին, մյուս դեպքում՝ 2-րդ ստորադասականի միջոցով. հմմտ. «*Յայնժամ մարնեսցեն զձեզ ի նեղութիւն, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք արեցեալք յամենայն ազգաց վասն անուան ինոյ*» (Մատթ., 24:9): Կամ՝ «...Զի ա՛յնպէս *անցես* ընդ ջուրն օրար,

32 Հին հունարենի սահմանական ապառնիի գանազան իմաստային կիրառությունների մասին տես **Wallace D. B.**, *Greek Grammar Beyond the Basics*, Grand Rapids, Michigan: Zondervan Publishing House, 1996, էջ 566-571, **Նույնի** *The Basics of New Testament Syntax*, Grand Rapids, Michigan: Zondervan, 2000, էջ 244-245:

և **անցանիցես** ընդ գերն օրարական...» (Առակք Սող., 9:18): Հանդիպում են նաև դեպքեր, երբ մեկանգամյա և ոչ տևական գործողությունը, հակառակ սպասվածին, արտահայտված է 1-ին ստորադասականի, իսկ ոչ մեկանգամյա և տևական գործողությունը՝ 2-րդ ստորադասականի միջոցով. հմմտ. «Եւ ա՛յս նշանա՛կ ձեզ. գրանիցէք մանուկ պարեալ ի խանձարուրս, և եղեա՛լ ի մտւր» (Ղուկաս, 2:12): Թեև այստեղ *գրանել* բայով ակնհայտորեն նկատի է առնված մեկանգամյա, կոնկրետ և ոչ տևական գործողություն, այդուհանդերձ, 1-ին ստորադասականի ձև է գործածված: Հունարեն բնագրում սահմանական ապառնի է. «...kai touto hymin to sēmeion **heurēsete** brephos esparganōmenon kai keimenon en phatnē» – «...Եվ այս՝ ձեզ համար նշան. **կգտնեք** խանձարուրով պատված և մտուրի մեջ դրված մանուկ»: Գրեթե նույնպիսի վիճակ է նաև հետևյալ երեք օրինակներում. հմմտ. «Եւ սաէ Մամուէլ. Զիա՛րդ երթայց. և լսիցէ Մաուուղ և սպանանիցէ՛ զիս» (Թագ. Ա, 16:2): Հունարենում *լսիցէ* և *սպանանիցէ՛* ձևերի դիմաց դարձյալ սահմանական ապառնիներ են. հմմտ. «...kai eipen Samouēl pōs poreuthō kai **akousetai** Saoul kai **apoktenei** me» – «...և Մամուելն ասաց՝ «Ինչպե՞ս գնամ. <և> Սավուղը **կլսի** <կիմանա> և **կսպանի** ինձ»»: Կամ՝ «Եւ սաէ Մանուլէ ցկինն իւր. Մահո՛ւ մեռանիցիւք զի զԱստուած տեսաք» (Դատաւորք, 13:22): Հունարեն բնագրում *մեռանիցիւք* ձևի դիմաց սահմանական ապառնի է. հմմտ. «...kai eipen Manōe pros tēn gynaika autou thanatō apothanoumetha hoti theon eidomen» – «...և ասաց Մանուլեն իր կնոջը՝ «Մահով կմեռնենք <հաստատ կմեռնենք>, քանի որ տեսանք Աստծուն»»: Ի դեպ, ռուսերեն թարգմանության մեջ *apothanoumetha* «մեռնելու ենք/կմեռնենք» սահմանական ապառնին արտահայտված է կատարյալ կերպի ձևով. «И сказал Мано́й жене своей: верно мы **умрем**, ибо видели мы Бога»: Կամ՝ «Եւ տեսա, մարտուցեալ ոմն առ նա՛ սաէ. Վարդապե՛տ բարի՛՝ զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիւմ զկեանան, յախրենականս» (Մատթ., 19:16): Տվյալ դեպքում 1-ին ստորադասականի *ընդունիցիւմ* ձևով նկատի է առնված դարձյալ մեկանգամյա և ոչ տևական գործողություն (որի իրագործումը ենթադրվում է Դատաստանի օրը): Իսկ 2-րդ ստորադասականի *գործեցից* ձևով արտահայտված գործողությունը կերպային տեսանկյունից կարող է լինել թե՛ մեկանգամյա և կոնկրետ, թե՛ ոչ մեկանգամ-

յա, սովորաբար կատարվող եղելություն (իբրև ընդհանուր վարքագծային պահվածք): Հետևաբար եթե *անկատար-կատարյալ* կերպային հակադրությունը գործուն օրինաչափություն լիներ, տվյալ համատեքստում *գործել* բայը կարող էր դրված լինել 1-ին կամ 2-րդ ստորադասականի ձևով, իսկ *ընդունիմ* «ձեռք բերել, ստանալ» բայը՝ միմիայն 2-րդ ստորադասականի: Ի դեպ, հունարեն բնագրում երկու դեպքում էլ աորիստ ստորադասականի ձև է գործածված. «...Didaskale ti agathon **poiēsō** hina **schō** zōēn aiōnion» – «...Ուսուցիչ, ի՞նչ բարի <բան> **անենմ**, որպեսզի **ունեցած լինեմ** <այսինքն՝ ձեռք բերեմ, ստանամ> հավիտենական կյանք»: Ըստ այդմ՝ բնագրին հավատարիմ մնալու դեպքում հայ թարգմանիչները կա՛մ պետք է գործածեին *ընդունիմ* բայը 2-րդ ստորադասականի (աորիստ ստորադասականի) ձևով՝ *ընկալայց*, կա՛մ էլ գո՛նե կիրառեին պարզ *ունիմ* բայի 1-ին ստորադասականի (ներկա ստորադասականի) *ունիցիմ* ձևը, այսինքն՝ «...զի *ունիցիմ գկեանսս յաիպենականս» – «...որպեսզի *ունենամ* հավիտենական կյանք (տևականորեն)»:

Բնագրային որոշ օրինակներ կարծես թե թույլ են տալիս ենթադրել, որ ժխտման դեպքում սկզբնապես նախապատվություն է տրվել անկատար կերպի (1-ին ստորադասականի) ձևին կատարյալ կերպի (2-րդ ստորադասականի) ձևի նկատմամբ: Սակայն հանդիպում են նաև դեպքեր, երբ կերպիմաստային առումով նույնատիպ գործողությունները թե՛ դրական և թե՛ ժխտական կիրառությամբ արտահայտված են կա՛մ 1-ին, կա՛մ 2-րդ ստորադասականի միջոցով՝ առանց որևէ իմաստային տարբերության. հմմտ. մի կողմից՝ «Խնդրեսցեն զիս չարք՝ և **ն՛չ գրասնիցեն**» (Առակք Սող., 1:28), մյուս կողմից՝ «Խնդրեսցես զիմաստությունս առ ի չարաց՝ և **ն՛չ գրցես**» (Առակք Սող., 14:6) կամ՝ «Իսկ մեռեալք՝ գկեանս **ն՛չ պեսանիցեն**, և բժիշկք **ն՛չ յարուցեն**» (Եսայի, 26:14): Նկատենք, որ հունարեն բնագրում առաջին երկու օրինակներում **ն՛չ գրասնիցեն** և **ն՛չ գրցես** ձևերի դիմաց սահմանական ապառնիի ձևեր են (հմմտ. «...zētēsousin me kakoï kai **ouch heurēsousin**» – «...չարերը կփնտրեն ինձ և **չեն գտնի**» և «...zētēseis sophian para kakois kai **ouch heurēseis**» – «...կփնտրես իմաստություն չարերի մոտ և **չես գտնի**»), իսկ վերջին օրինակում **ն՛չ պեսանիցեն** և **ն՛չ յարուցեն** ձևերի դիմաց «ou mē» ուժգին (կրկնակի) ժխտումով աորիստ ստորադասա-

կան (ուժգին ժխտումային աորիստ ստորադասական)³³ է գործածված. հմմտ. «...hoi de nekroi zōēn ou mē idōsin oude iatroi ou mē anastēsōsin» – «...իսկ մեռյալները կյանք **չեն տեսնի**, և բժիշկները **չեն վերկենա**»: Արդ, ինչպես տեսնում ենք, վերջին դեպքում միևնույն բարդ համադասական նախադասության կազմում կերպային առումով նույնական երկու գործողություններից մեկը հայերենում արտահայտված է 1-ին ստորադասականի (*ն'չ տեսանիցեն*), իսկ մյուսը՝ 2-րդ ստորադասականի (*ն'չ յարուցեն*) միջոցով՝ առանց որևէ կերպիմաստային տարբերության: Ուշագրավ է նաև հետևյալ օրինակը՝ «*Երկինք և երկիր անցեն, և բանք իմ ն'չ անցանիցեն*» (Ղուկաս, 21:33): Հունարեն բնագրում երկու բայերն էլ դրված են սահմանական ապառնիի ձևով (ժխտական ձևը՝ «ou mē» ուժգին ժխտումով). հմմտ. «...ho ouranos kai hē gē **pareleusontai** hoi de logoi mou **ou mē pareleusontai**» – «...երկինքը և երկիրը **կանցնեն**, բայց իմ խոսքերը **չեն անցնի**»: Իսկ Մատթեոսի ավետարանում այս նույն նախադասության թե՛ դրական և թե՛ ժխտական ձևերի դեպքում հայերենում 2-րդ ստորադասական է գործածված. հմմտ. «*Երկինք և երկիր անցեն, և բանք իմ մի' անցեն*» (Մատթ., 24:35): Հունարեն բնագրում *անցեն* ձևի դիմաց դարձյալ սահմանական ապառնի է, իսկ *մի' անցեն* ձևի դիմաց՝ ուժգին ժխտումային աորիստ ստորադասական. հմմտ. «...ho ouranos kai hē gē **parelusetai** hoi de logoi mou **ou mē parelthōsin**» – «...երկինքը և երկիրը **կանցնեն**, բայց իմ խոսքերը **չեն անցնի**»: Մեր կարծիքով՝ բերված նախադասության մեջ *ն'չ անցանիցեն/մի' անցեն* տարբերակայնությունը չի կարող ուղղակիորեն պայմանավորված լինել հունարեն բնագրում մի դեպքում ուժգին ժխտումով սահմանական ապառնիի, մյուս դեպքում՝ ուժգին ժխտումով աորիստ ստորադասականի առկայությամբ, եթե հաշվի առնենք, որ՝ **ա**) հին հունարենում ուժգին ժխտումային սահմանական ապառնին և ուժգին ժխտումային աորիստ ստորա-

33 Հին հունարենում հաստատապես կատարելի գործողություններ/եղելություններ արտահայտող սահմանական ապառնիի ժխտական ձևը կարող է գործնականում «ou mē» ժխտական մասնիկների միաժամանակյա կիրառմամբ: Բայց առավել հաճախ «ou mē» ուժգին ժխտման դեպքում այդ նույն նշանակությամբ գործածվում է աորիստ ստորադասականը, որը հայտնի է *ուժգին ժխտումային աորիստ ստորադասական* անվամբ (տե՛ս **McKay K. L.**, *A New Syntax of the Verb in New Testament Greek: An Aspectual Approach*, New York • San Francisco • Bern • Baltimore Frankfurt am Main • Berlin • Wien • Paris: Peter Lang, 1994, էջ 52, 74, **Wallace D. B.**, *Greek Grammar...*, էջ 468, 571):

դասականը ունեն գրեթե նույն գործառությունը³⁴, **բ**) հին հունարենի ոչ միայն սահմանական ապառնիի, այլև ուժգին ժխտումային աորիստ ստորադասականի փոխարեն դասական հայերենում այլ դեպքերում հավասարապես հանդես են գալիս թե՛ 1-ին և թե՛ 2-րդ ստորադասականները (հմմտ. թեկուզ հենց վերը բերված օրինակը՝ «Իսկ մեռեալք՝ զկեսսս **ն՛չ տեսանիցեն, և բժիշկք **ն՛չ յարուցեն****»), **գ**) մեր դիտարկումների համաձայն՝ ստորադասական եղանակի հետ *մի՛* ժխտական մասնիկի գործառությունը, հակառակ Ա. Մեյերի պնդման³⁵, միշտ չէ, որ արգելանքի իմաստ է ենթադրում, այլ կարող է նաև սահմանական ապառնիի նշանակությամբ ժխտում արտահայտել: Մյուս կողմից՝ ակնհայտորեն արգելանքի իմաստով գործածված ստորադասականի հետ *մի՛* մասնիկի փոխարեն երբեմն *ն՛չ* ժխտական մասնիկ է կիրառվում: Ուստի հաճախ նույնական համատեքստում և միևնույն նշանակությամբ հանդես եկող հունարենի ուժգին ժխտումային աորիստ ստորադասականի (ինչպես նաև ուժգին ժխտումային սահմանական ապառնիի) դիմաց դասական հայերենում մե՛րթ *ն՛չ* մասնիկով, մե՛րթ *մի՛* մասնիկով ստորադասականի ժխտական ձև է. հմմտ. «Բայց արդարև՝ ասե՛մ ձեզ, եթե են ոմանք ի դոցանէ որ այդր կան, որք **մի՛ ճաշակեցեն** զմահ, մինչև տեսցեն զարքայութիւն Ասրուծոյ» (Ղուկաս, 9:27): Հունարեն բնագրում *մի՛ ճաշակեցեն* ձևի դիմաց ուժգին ժխտումային աորիստ ստորադասական է. հմմտ. «...legō de hymin alēthōs eisin tines... hoi **ou mē geusōntai** thanatou heōs an idōsin tēn basileian tou theou» – «...բայց ձեզ ճշմարիտ եմ ասում, կան ոմանք... որոնք մահ **չեն ճաշակի**, մինչև տեսնեն <չտեսնեն> Աստծո արքայությունը»: Մինչդեռ Մատթեոսի ավետարանում գրեթե նույնպիսի նախադասության մեջ և միևնույն իմաստային համատեքստում հունարենի նույն ուժգին ժխտումային աորիստ ստորադասականի փոխարեն հայերենում ոչ ժխտական մասնիկով ստորադասական է. հմմտ. «Ամէն ասե՛մ ձեզ. զի իցեն ոմանք ի սոցանէ՝ որ աստ կան. որք **ն՛չ ճաշակեցեն** զմահ՝ մինչև տեսանիցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով» (Մատթ., 16:28): Ահա և հունարեն բնագրի համապատասխան հատվածը. «...amēn legō hymin hoti eisin tines... hoitines **ou mē geusōntai**

34 Հմմտ. McKay K. L., նշվ. աշխ., էջ 52, 74, Wallace D. B., Greek Grammar..., էջ 468, 571:
 35 Հմմտ. Meillet A., Altarmenisches..., էջ 125:

thanatou heōs an idōsin ton huion tou anthrōpou....» – «...ձշմարիտ եմ
 ասում ձեզ, որ կան ոմանք... որոնք մահ **չեն ձաշակի**, մինչև տես-
 նեն <չտեսնեն> մարդու Որդուն...»: Իսկ, ասենք, հետևյալ օրինա-
 կում ստորադասականի հետ *n'z* մասնիկ է գործածված, թեև համա-
 տեքստն ակնհայտորեն արգելանքի իմաստ է ենթադրում. հմմտ.
 «...Ասացեալ է, թէ **n'z փորձեսցես** զՏէր Աստուած ք» (Ղուկաս,
 4:12): Հունարեն բնագրում սովորական ժխտումով սահմանական ա-
 պառնի է գործածված՝ արգելանքի (արգելական հրահանգի) իմաս-
 տով³⁶. «...**Ouk ekpeiraseis** kyrion ton theon sou» – «...**Զպէտք է**
փորձես <**փորձե՛ս**> քո Տէր Աստծուն»: Նշենք, որ հին հայերենի
 ստորադասականի ձևերի հետ *n'z* և *մի՛* ժխտական մասնիկների
 խառը գործածության նմանատիպ դեպքերը բավական հաճախա-
 դեպ են Աստվածաշնչում: Ահա թե ինչու կարծում ենք, որ վերը բեր-
 ված *n'z* *անցանիցեն/մի՛ անցցեն* տարբերակայնության դեպքում
 նույնպես *n'z* և *մի՛* մասնիկների տարբերությունն էական չէ, այլ
 կարևորն այն է, որ հասկացական իմաստով և կերպային առումով
 միևնույն գործողության ժխտումը մի դեպքում արտահայտված է 1-ին,
 մյուս դեպքում՝ 2-րդ ստորադասականի միջոցով՝ առանց կերպ-
 իմաստային որևէ նկատելի տարբերության:

Այսպիսով՝ 1-ին և 2-րդ ստորադասականների կիրառությունների
 համատեքստաիմաստային քննությունը կասկած չի թողնում, որ ստո-
 րադասականի այդ երկու տիպերը սկզբնապես միմյանց հակադրվել
 են կերպային իմաստով (*անկատար կերպ-կատարյալ կերպ*), և այդ
 կերպային հակադրությունը շատ հաճախ դեռ հստակ կարելի է տես-
 նել դասական հայերենում: Բայց մյուս կողմից՝ ակնհայտ է նաև, որ
 նույնիսկ դասական շրջանում ստորադասական եղանակի դեպքում
 կերպային հակադրությունն այլևս չէր գիտակցվում որպես գործուն
 օրինաչափություն և չէր դրսևորվում հետևողականորեն: Ուստի հա-
 ճախ կերպային առումով նույնատիպ գործողություններն արտահայտ-
 վել են մի դեպքում 1-ին, մյուս դեպքում՝ 2-րդ ստորադասականի մի-
 ջոցով: Դասական հայերենում 1-ին և 2-րդ ստորադասականները
 սկզբունքորեն կարող են միմյանց փոխարինել գրեթե բոլոր կիրա-
 ռություններում: Իսկ որոշ գործառությունների դեպքում 1-ին ստո-

36 Հին հունարենում սահմանական ապառնիի ձևը կարող է արտահայտել նաև հրահանգ/արգելանք
 (տես McKay K. L., նշվ. աշխ., էջ 81-82, Wallace D. B., Greek Grammar..., էջ 569):

րադասականի համեմատաբար քիչ գործածական լինելը պետք է բացատրել նրա գործառության սահմանափակման տարաժամանակյա ընդհանուր միտումով³⁷: Միննույն ժամանակ դասական հայերենում 1-ին և 2-րդ ստորադասականների համաժամանակյա գրեթե նույնական գործառությունները և նրանց տարաժամանակյա ձևակազմական ընդհանրությունը (մի դեպքում ներկայի, մյուս դեպքում աորիստի հիմքին միննույն **-hg-* հիմքակազմ ածանցի ավելացմամբ) տիպաբանական տվյալների հետ անառարկելիորեն հաստատում են, որ այդ երկու ձևերն էլ ստորադասականի եղանակային կարգավիճակ ունեն³⁸: Ըստ այդմ՝ թեև դասական հայերենում սահմանական ապառնիի իմաստն առավել հաճախ դրսևորվում է ստորադասականի, հատկապես՝ 2-րդ ստորադասականի միջոցով, այդուհանդերձ, այն չի կարող դիտվել իբրև ապառնի ժամանակաձև, քանի որ՝ **ա**) հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականները գործառության լեզվական կառուցվածքում (բայց ո՛չ ծագմամբ) հիմնականում համապատասխանում են հնդեվրոպական ստորադասականին (մասամբ էլ՝ ըղձականին)³⁹, **բ**) ստորադասական եղանակի գործածությունը նաև ապառնի ժամանակի նշանակությամբ տիպաբանորեն անսովոր երևույթ չէ (ի դեպ, առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հնդեվրոպական նախալեզվում նույնպես ստորադասականը նաև ապառնիի իմաստ է արտահայտել)⁴⁰:

3. Հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականների հաճախագործածության հարաբերակցությունը զանազան իմաստային կիրառություններում

Անշուշտ, հնարավոր չէ մեկ հոդվածի շրջանակներում հանգամանորեն դիտարկել ստորադասական եղանակի շարահյուսական բոլոր գործառությունները դասական հայերենում: Ուստի այստեղ կանդրադառնանք միայն մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից

37 Տե՛ս Ավետյան Ս., Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի իմաստագործառության փոխհարաբերության հարցի շուրջ, էջ 150-165:

38 Տե՛ս նույն տեղում:

39 Տե՛ս Meillet A., *Esquisse...*, էջ 123:

40 Հմմտ. Sampanis K., The interplay between the future and the subjunctive mood in the diachrony of the Greek language, Lambert F., Allan R., Markopoulos Th. (eds.), *The Greek Future and its History / Le futur grec et son histoire. Bibliothèque des cahiers de linguistique de Louvain*, 139, Louvain-la-Neuve: Peeters, 2017, էջ 237-242, Lyons J., *Semantics*, Vol. 2, Cambridge: Cambridge University Press, 1977, էջ 815-818:

առավել կարևորներին: Ինչպես և կարելի է ենթադրել անվանումից, տիպաբանորեն ստորադասական եղանակի ամենաբնորոշ և առաջնային կիրառությունը որոշակի բարդ ստորադասական նախադասությունների երկրորդական նախադասության ստորոգյալի պաշտոնում հանդես գալն է, իսկ անկախ (գլխավոր) նախադասություններում դրա գործածությունը, ըստ Մ. Հասպելմաթի, հետագա գործառության ընդլայնման արդյունք է⁴¹: Ուստի կարծում ենք՝ Մ. Աբեդյանի կողմից ստորադասական եղանակի (լատ. *subjunctivus*, ֆր. *subjunctif*) և, այսպես կոչված, շաղկապական եղանակի (լատ. *conjunctivus*) իմաստագործառական տարբերակումը⁴² թյուրըմբռնման տեղիք է տալիս և չի կարող ընդունելի լինել, մանավանդ որ լատ. *modus conjunctivus* և *modus subjunctivus* եզրույթները (հմմտ. նաև ռուս. *сoслагательное наклонение – конъюнктив, субъюнктив* եզրույթային համարժեքությունը⁴³) լեզվաբանության մեջ սովորաբար գործածվում են միևնույն իմաստով, և երկու դեպքում էլ նկատի է առնվում տվյալ բայաձևի՝ երկրորդական (ոչ գլխավոր, ոչ հիմնական) նախադասության մեջ գործառությունը: Իհարկե, դասական հայերենում ստորադասական եղանակը, ինչպես արդեն նշվել է, իմաստագործառական բավական լայն դաշտ ունի և բուն ստորադասական եղանակի գործառությունը հանդես է գալիս ոչ միայն բարդ ստորադասական, այլև անկախ (պարզ) նախադասություններում: Բացի այդ՝ ստորադասականը նաև սահմանական ապառնիի և հրամայականի/արգելականի գործառություններ է կատարում: Ուստի առանց հունարեն բնագիրը նկատի ունենալու երբեմն դժվար է ստուգապես ասել, թե հին հայերենի ստորադասականը տվյալ դեպքում կոնկրետ ո՞ր նշանակությամբ է գործածված: Այդ առումով ուշագրավ է, օրինակ, հետևյալ նախադասությունը. «...այլ ասա՛ բանի՛ւ՝ և բժշկեցի՛ մանուկս ին» (Ղուկաս, 7:7): Տվյալ դեպքում առանց հունարեն բնագրի դժվար կլիներ ստուգապես որոշել՝ արդյոք *բժշկեցի՛* ձևը կիրառված է հրամայականի՞ եզ. 3-րդ դ. («...այլ ասա՛ խոսքով, և թո՛ղ բժշկվի իմ մանուկը»), թե՞ սահմանական ապառնի եզ. 3-րդ դ. նշանակությամբ («...այլ ասա՛ խոսքով, և կբժշկվի իմ մա-

41 Տե՛ս **Haspelmath M.**, The Semantic Development of Old Presents. New Futures and Subjunctives without Grammaticalization, “Diachronica”, 15:1, 1998, էջ 35, տողատակի ծան. 9:

42 Հմմտ. **Մարգարյան Ա. Ս.**, Բայի եղանակների արժեքավոր ուսումնասիրություն, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2000, N 1 (100), էջ 96 հջ.:

43 Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/Сoслагательное_наклонение (մուտք՝ 12.11.2022):

նուկր»)։ Իրականում *բժշկեսցի՛* ձևն այստեղ գործածված է հրամ. 3-րդ դ. իմաստով՝ «թո՛ղ բժշկվի, թո՛ղ բուժվի», եթե հաշվի առնենք, որ հունարեն բնագրում դրա դիմաց կրավ. սեռի աորիստ հրամ. եզ. 3-րդ դ. ձև է՝ *iathēto* «թո՛ղ բժշկվի». հմմտ. «...alla eipe logō kai **iathēto** ho pais mou» – «...այլ ասա՛ խոսքով, և **թո՛ղ բժշկվի** իմ մանուկը»։

Անկախ (պարզ, ինչպես նաև բարդ համադասական) նախադասություններում բուն ստորադասական եղանակին բնորոշ գործառնություններից հատկապես հաճախադեպ են հրավիրահորդորական (hortatory) կամ կամական (volitive) ստորադասականը (որն իմաստով համապատասխանում է մի շարք լեզուների հրամ. հոգ. 1-ին դ. ձևին) և խորհրդակցական (deliberative) կամ երկբայական (dubitative) ստորադասականը⁴⁴, ինչպես նաև ստորադասականի գործածությունը հրամ. 3-րդ դ. նշանակությամբ։ Բերենք որոշ օրինակներ դրանցից յուրաքանչյուրի համար։

«**Եկա՛յք երթիցուք** մինչև ցԲերթահէմ, և **յրեսցո՛ւք** զինչ է բանս այս որ եղև» (Ղուկաս, 2:15)։ Հունարեն բնագրում ևս *երթիցուք* և *յրեսցո՛ւք* ձևերի դիմաց հրավիրահորդորական աորիստ ստորադասականներ են՝ *dielthōmen* «զնա՛նք», *idōmen* «տեսնե՛նք», իսկ *եկա՛յք* հրամ. ձևը հին հայերենում հաճախ է ավելացվում հրավիրահորդորական իմաստն առավել ընդգծելու նպատակով։ Հունարենում ևս նման դեպքերում հայ. *եկա՛յք*-ին իմաստով համարժեք *deute* «եկե՛ք, եկե՛ք այժմ» ձևը երբեմն դրվում է ստորադասականի ձևից առաջ. հմմտ. «...*Սա՛ է ժառանգն եկա՛յք սպանցուք զսա, և կալցո՛ւք զժառանգութիւն սորա*» (Մատթ., 21:38)։ Ահա և հունարեն բնագրային հատվածը. «...**deute apokteinōmen** auton kai **schōmen** tēn klēronomian autou» – «...**եկե՛ք սպանենք** նրան <սրան> և **ունենանք** <տիրենք, ձեռք բերենք> նրա <սրա> ժառանգությունը»։ Ի դեպ, ուշագրավ է, որ հունարեն բնագրում ևս *echō* «ունեն» բայի աորիստ ստորադասականի ձևը (*schōmen*) այստեղ կիրառված է «տիրենք, ձեռք բերենք» իմաստով։ Հետևյալ օրինակներում ևս թե՛ հայերենում և թե՛ հունարենում ստորադասականը գործածված է հրավիրահորդորական իմաստով. «**Կերիցո՛ւք և արբցո՛ւք՝ քանզի վաղիս մեռանիմք**» (Եսայի, 22:13)։ Հմմտ. հունարեն բնագրի նույն հատվածը.

44 Ստորադասական եղանակի նշված իմաստային գործառնությունների վերաբերյալ տես Wallace D. B., *Greek Grammar...*, էջ 463-468։ Հմմտ. նաև Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., «Միտք» հրատ., 1965, էջ 304-305։

«...phagōmen kai piōmen aurion gar apothnēskomen» – «...<եկե՛ք> ուտե՛նք և խմե՛նք, քանզի վաղը մեռնում ենք <մեռնելու ենք>»: Կամ «...ասեն զմիմեանս. Մի՛ պա՛րտեացուք զայդ, այլ արկցուք վիճա՛կս ի վերայ դորա՛ ում և ելցէ՛» (Յովհ., 19:24): Հմմտ. հուն. «Mē schisōmen auton alla lachōmen peri autou» – «եկե՛ք չպատռենք <չպատառոտենք> դա, այլ վիճակ գցենք դրա վրա»: Կամ «...եկա՛յք վաճառեացո՛ւք զնա Իսայելացւոցն. և ձեռք մեր մի՛ շաղախեսցին ի նմա» (Ծնունդք, 37:27): Հմմտ. հուն. «...deute apodōmetha auton...» – «...եկե՛ք վաճառենք նրան...»: Կամ «...եւ ասէ Սաուդ. Իջցո՛ւք զհեղ ալազգեացն զցայգ, և յափշտակեացո՛ւք ի նոցանէն մինչև լուսացի օր, և մի՛ թողուցուք ի նոցանէ այր» (Թագ. Ա, 14:36): Հունարեն բնագրում ևս առիստ ստորադասականի ձևեր են. «...katabōmen... kai diarpasōmen... kai mē hypolipōmen en autois andra...» – «<...եկե՛ք> իջնենք... և հափշտակենք... և չթողնենք նրանց մեջ <նրանցից> որևէ այր...»: Նշենք, որ հրավիրահորդորական նշանակությամբ դրական հրահանգի դեպքում դասական հայերենում հիմնականում 2-րդ ստորադասականն է գործածվում, իսկ հրավիրահորդորականի ժխտական (արգելական) իմաստով կիրառություններում 2-րդ ստորադասականը անհամեմատ ավելի հաճախադեպ է, քան 1-ին ստորադասականը:

Խորհրդակցական կամ երկբայական ստորադասականի կիրառությունները կարելի է լուսաբանել հետևյալ օրինակներով.

«...ասէ ցՓիլիպպոս. Ուսրի՞՞ գնեացուք հաց՝ զի կերիցեն դորս» (Յովհ., 6:5): Հմմտ. հունարեն հատվածը. «...Pōthen agorasōmen artous...» – «...որտեղի՞ց գնենք հաց...»: Կամ «...հարցանէ՛ր ցնա՛ և ասէր. Վարդապե՛տ բարի՛՞ զի՞նչ արարից զի զկեանսն յախրենականս ժառանգեցից» (Մարկոս, 10:17): Հմմտ. հուն. «...Didaskale agathe ti poiēsō hina zōēn aiōnion klēronomēsō» – «...Բարի՛ Ուսուցիչ, ի՞նչ անեն, որպեսզի հավիտենական կյանք ժառանգեն»: Կամ «Ասեն ցնա. Զի՞նչ աննիցենք զի զգործսն Աստուծոյ գործեացուք» (Յովհ., 6:28): Հմմտ. հուն. «Ti poiōmen hina ergazōmetha ta erga tou theou» – «Ի՞նչ անենք, որպեսզի Աստծո գործերը կատարենք»: Նկատենք, որ, ի տարբերություն նախորդ օրինակի, այստեղ թե՛ հին հունարենում և թե՛ հին հայերենում ներկա ստորադասական է գործածված խորհրդակցական/երկբայական իմաստով: Որոշ դեպքերում դասա-

կան հայերենի խորհրդակցական կամ երկբայական ստորադասականի դիմաց հունարեն բնագրում սահմանական ապառնի է, բայց, իհարկե, դարձյալ խորհրդակցական, երկբայական իմաստով⁴⁵. հմմտ. «*Եւ արարօջեա՛ց ժողովորդն զՄովսիսէ և ասեն. Զի՞նչ արբցուք*» (Ելք, 15:24): Հունարեն բնագրում *արբցուք* ձևի դիմաց սահմանական ապառնի է՝ խորհրդակցական, երկբայական իմաստով. «...ti piometha» – «...ի՞նչ խմենք»: Իսկ ահա հետևյալ նախադասության մեջ հին հունարենի աորիստ ստորադասականը և սահմանական ապառնին միևնույն՝ խորհրդակցական, երկբայական նշանակությամբ հանդես են գալիս կողք կողքի. հայերենում երկու դեպքում էլ 2-րդ ստորադասական է. հմմտ. «*Ասեն ցնա. Երթիցուք **գնեսցուք** երկերի՛ր դահեկանի հաց, և **փացո՛ւք** դոցա ուրե՛լ*» (Մարկոս, 6:37) և հուն. «Apelthontes **agorasōmen** (աոր. ստորադաս.) dēnariōn diakosiōn artous kai **dōsomen** (սահմ. ապառնի) autois phagein» – «Գնալով՝ **գնե՛նք** <գնանք **գնե՛նք**> երկու հարյուր դահեկանի հաց և **տա՛նք** նրանց ուտելու»:

Դասական հայերենում 3-րդ դ. հրամայականի/արգելականի (որը հաճախ կարող է արտահայտել նաև իղձ, ցանկություն, խնդրանք⁴⁶) նշանակությամբ կիրառություններում 2-րդ ստորադասականը ընդհանուր առմամբ առավել հաճախագործածական է, քան 1-ին ստորադասականը: Այդուհանդերձ, 1-ին ստորադասականը ևս գործածվում է ոչ միայն արգելանքի (արգելականի), այլև դրական հրահանգի (հրամայականի) իմաստով: Հունարեն բնագրում տվյալ նշանակությամբ առավել հաճախ ներկա հրամայական կամ աորիստ հրամայական 3-րդ դ. ձև է գործածված, սակայն հաճախ հանդիպում է նաև սահմանական ապառնի (հարկադրականի՝ «պետք է/չպետք է» իմաստային երանգով), իսկ երբեմն էլ՝ ըղձական եղանակի (optative) ձև: Բայց անկախ այն բանից՝ տվյալ դեպքում հունարեն բնագրում ներկա հրամայականն, թե՛ աորիստ հրամայական է գործածված, հայերենում մե՛րթ 1-ին ստորադասական է

45 Հմմտ. նաև Wallace D. B., Greek Grammar..., էջ 570, **Ուոյնի** The Basics of New Testament..., էջ 245:

46 Հմմտ., օրինակ, «Հայր մեր» աղոթքի հետևյալ հատվածը. «Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ՛ արքայութիւն քո. եղիցին կամք քո...» (Մատթ., 6:9-10): Հունարեն բնագրում *սուրբ եղիցի, եկեսցէ՛* և *եղիցին* ձևերի դիմաց աորիստ հրամ. 3-րդ դ. ձևեր են, որոնք, ինչպես և դասական հայերենի նշված ձևերը ոչ թե հրահանգ, այլ իղձ, ցանկություն, խնդրանք են արտահայտում. հմմտ. «...hagiasthētō to onoma sou elthetō hē basileia sou genēthētō to thelēma sou...» – «...թող սուրբ լինի՞ քո անունը, թող գա՞ քո թագավորությունը, թող լինի/կատարվի՞ քո կամքը...» և այլն:

կիրառվում, մե՛րթ էլ՝ 2-րդ ստորադասական՝ առանց իմաստային որևէ նկատելի տարբերության: Բերենք որոշ օրինակներ:

«**Ծանրասցի՛** գործ մարդկանն, և այնմ **հոգասցեն**. և **մի՛ հոգասցեն** ի բանս տարապարտս» (Ելք, 5:9): Հունարեն բնագրում երեք բայի դիմաց էլ ներկա հրամ. 3-րդ դ. ձևեր են. «...**barynesthō** ta erga tōn anthrōpōn toutōn...» – «...թո՛ղ ծանրանան <թո՛ղ ծանրանա>⁴⁷ այս մարդկանց գործերը...», «...kai merimnatōsan tauta...» – «...և թո՛ղ հոգ տանեն դրանց մասին...», «...kai mē merimnatōsan en logois kenois» – «...և թո՛ղ միտքները չզբաղեցնեն <թո՛ղ չզբաղվեն> դատարկ խոսքերով»: Կամ՝ «*Եւ ասէ ցնոսա Մովսէս. Մի՛ որ թողուցու այրի յայգ*» (Ելք, 16:19): Հունարեն բնագրում աորիստ հրամ. 3-րդ դ. ձև է, ընդ որում՝ ժխտական մասնիկը դերանվան վրա. «...**mēdeis katalipetō** ap' autou eis to prōi» – «...թո՛ղ **ոչ մեկը** դրանից թողնի <թո՛ղ **ոչ մեկը չթողնի**> մինչև առավոտ»: Կամ՝ «*Եւ մի՛ որ ելանիցէ ընդ քեզ, և մի՛ որ երևեսցի ամենևին ի լերինս. և արջա՛ն և ոչխար՛ մի՛ արածեսցին մօտ ի լեանսն*» (Ելք, 34:3): Հունարեն բնագրում առաջին երկու բայերի դիմաց աորիստ հրամայականի ձևեր են, իսկ երրորդ բայի դիմաց՝ ներկա հրամայական. հմմտ. «...kai **mēdeis anabētō** meta sou **mēde ophthētō** en panti tō orei kai ta probata kai hai boes **mē nemesthōsan** plēsion tou orous ekeinou» – «...և **թո՛ղ ոչ մեկը չելնի** քեզ հետ, և ոչ մեկը **թո՛ղ չերևա** ամբողջ սարի վրա, և ոչխարներ ու արջառներ **թո՛ղ չարածեն** այն լեռան մոտ»: Կամ՝ «*Մա՛րդ որ մարդ՝ որ հայհոյեսցէ զհայր իւր կամ զմայր իւր՝ մահո՛ւ մեռցի*» (Ղեւտական, 20:9): Հունարեն բնագրում (*մահու*) *մեռցի* ձևի դիմաց կրավ.-միջին սեռի ներկա հրամ. 3-րդ դ. ձև է. հմմտ. «...anthrōpos hos an kakōs eipē ton patera autou ē tēn mētera autou **thanatō thanatousthō**» – «...այն մարդը, ով որ հայհոյի իր հորը կամ իր մորը, **թո՛ղ մատնվի մահվան** <**թո՛ղ մեռնի**>»: Կամ՝ «*Եւ եթէ ննջեսցէ որ ընդ նուն՛ իւրում, մահո՛ւ մեռցին երկրքին*» (Ղեւտական, 20:12): Հունարեն բնագրում (*մահու*) *մեռցին* ձևի դիմաց կրավ.-միջին սեռի ներկա հրամ. հոգ. 3-րդ դ. ձև է. հմմտ. «...kai ean tis koimēthē meta nymphēs autou **thanatō thanatousthōsan**

47 Հին հունարենում չեզոք սեռի հոգնակի ենթակայի հետ ստորոցյալը սովորաբար դրվում է եզ. 3-րդ դ. ձևով, քանի որ չեզոք սեռի հոգ. ուղղ.-հայց. a վերջավորությունը սկզբնապես հավաքական հոգնակերտ մասնիկ է եղել:

amphoteroi...» – «...և եթե որևէ մեկը քնի իր հարսի հետ, **թո՛ղ մատնվեն մահվան <թո՛ղ մեռնեն>** երկուսն էլ...»: Կամ՝ «*Եւ կին՝ որ մարչիցի յամենայն անասուն պղծել նմա ի նմանէ, սպանանիջի՛ք զկինն և զանասունն. մահո՛ւ մեռանիցին՝ զի մահապարտք են*» (Ղեւտական, 20:16): Հունարեն բնագրում (*մահո՛ւ*) *մեռանիցին* ձևի դիմաց դարձյալ կրավ.–միջին սեռի ներկա հրամ. հոգ. 3–րդ դ. ձև է. հմմտ. «...kai gynē hētis proseleusetai pros pan ktēnos bibasthēnai autēn hyp’ autou apokteneite tēn gynaika kai to ktēnos **thanatō thanatousthōsan**...» – «...և կին, որ կնոտենա <...և եթե որևէ կին մոտենա> որևէ անասունի պղծվելու նրա կողմից, սպանե՛ք կնոջը և անասունին. **թո՛ղ մատնվեն մահվան <թո՛ղ մեռնեն>**...»: Կամ՝ «*Եւ որ հարկանէ զմարդ՝ և մեռանիցի, մահո՛ւ մեռանիցի և նա*» (Ղեւտական, 24:21): Հունարեն բնագրում (*մահո՛ւ*) *մեռանիցի* ձևի դիմաց կրավ.–միջին սեռի ներկա հրամ. եգ. 3–րդ դ. ձև է. «...hos an pataxē anthrōpon kai apothanē **thanatō thanatousthō**» – «...ով որ մարդու հարվածի, և նա մեռնի, **թո՛ղ մատնվի մահվան <թո՛ղ մեռնի>** նաև նա»: Կամ՝ «*Մի՛ նեղեցէ այր զընկեր իւր...*» (Ղեւտական, 25:17): Հունարեն բնագրում ներկա հրամ. 3–րդ դ. ձև է. հմմտ. «...**mē thlibetō** anthrōpos ton plēsion...» – «...**թո՛ղ** <որևէ> մարդ **չնեղի** իր ընկերոջը...»: Կամ՝ «*Մի՛ ոք ի ձէնջ չարչարեացի իբրև զսպանող, կամ իբրև զգո՛ղ, կամ իբրև զչարագո՛րծ, կամ իբրև զօրարարեալսն՛ջ*» (Գործք., Պետրոս Ա, 4:15): Հունարեն բնագրում *մի՛ չարչարեացի* ձևի դիմաց ներկա հրամ. 3–րդ դ. ձև է. հմմտ. «...**mē gar tis hymōn paschetō**...» – «...ձեզնից որևէ մեկը <ոչ մեկը> **թո՛ղ չչարչարվի <չարչարանքների չենթարկվի>**...»:

Հետևյալ օրինակներում էլ հայերենի հրամայական 3–րդ դ. նշանակությամբ գործածված ստորադասականի դիմաց հունարեն բնագրում սահմանական ապառնի է՝ հրահանգողական իմաստով. հմմտ. «*Նա՛ կին կո՛յս յազգէ իւրմէ առնուցու. զայրի և զհանեալ, և զպոռնիկ, մի՛ առնուցու. այլ կոյս յազգէ՛ իւրմէ առնուցու կին*» (Ղեւտական, 21:13–14): Հունարեն բնագրում սահմ. ապառնիի ձևեր են՝ հրահանգողական իմաստով. հմմտ. «...houtos **gynaika** parthenon ek tou genous autou **lēmpsetai**. chēran de kai ekbeblēmenēn kai bebēlōmenēn kai pornēn tautas **ou lēmpsetai** all’ ē parthenon ek tou genous autou **lēmpsetai gynaika**» – «...նա իր ժողովրդից կույսի

պետք է կին առնի. այրու կամ ամուսնալուծվածի կամ պղծյալի կամ պոռնիկի <դրանց> **չպետք է առնի,** այլ իր ժողովրդից կույսի **պետք է կին առնի»:** Հմմտ. նաև ռուսերեն և անգլերեն թարգմանական տարբերակները⁴⁸. «В жену он **должен брать** девицу [из народа своего]: вдову, или отверженную, или опороченную, [или] блудницу, **не должен он брать,** но девицу из народа своего **должен он брать** в жену» և «The woman he marries **must be** a virgin. He **must not marry** a widow, a divorced woman, or a woman defiled by prostitution, but only a virgin from his own people»: Կամ՝ «*Կին պոռնիկ և պղծեալ՝ մի՛ առնուցուն. և զկին հանեալ յառնէ իւրմէ՛ մի՛ առնուցուն*» (Դեւտական, 21:7): Հմմտ. հունարեն հատվածը. «...gynaika pornēn kai bebēlōmenēn **ou lēmpsontai** kai gynaika ekbeblēmenēn apo andros autēs...» – «...**չպետք է առնեն** կին պոռնիկի կամ պղծյալի կամ իր ամուսնու կողմից դուրս հանվածի <այն է՝ ամուսնալուծվածի>...»: Հմմտ. նաև ռուսերեն և անգլերեն թարգմանական տարբերակները. «Они **не должны брать** за себя блудницу и опороченную, **не должны брать** и жену, отверженную мужем своим...» և «They **must not marry** women defiled by prostitution or divorced from their husbands...»: Կամ՝ «...*և մի՛ թողուցուն ինչ ի նմանէ յայգ. և ոսկր մի՛ բեկանիցեն ի նմանէ. ըստ օրինի զարկի՛ն արասցեն զնս*» (Թիւրք, 9:12): Հունարեն բնագրում դարձյալ սահմ. ապառնիի ձևեր են՝ հրահանգողական իմաստով. հմմտ. «...**ou kataleipsousin** ap’ autou eis to prōi kai ostoun **ou syntripsousin** ap’ autou kata ton nomon tou pascha poiēsousin auto» – «...**թո՛ղ չթողնեն** <չպետք է թողնեն> նրանից մինչև առավոտ <մինչև այգ>, և ոսկոր **թո՛ղ չկտորեն** <չպետք է կտորեն> նրանից, և դա **թո՛ղ անեն** <պետք է անեն> Ջատիկի օրենքի <կարգի> համաձայն»: Հմմտ. նաև ռուսերեն և անգլերեն թարգմանական տարբերակները. «...и **пусть не оставляют** от нее до утра и костей ее **не сокрушают;** пусть совершат ее по всем уставам о Пасхе» և «They **must not leave** any of it till morning or

48 Այստեղ և հետագա շարադրանքում ռուսերեն թարգմանական օրինակները բերվում են Աստվածաշնչի սինոդական թարգմանությունից (синаодальный перевод) կամ, այսպես կոչված, սինոդական տեքստից (синаодальный текст), իսկ անգլերենի դեպքում հիմք է ընդունվել Աստվածաշնչի անգլերեն նոր միջազգային տարբերակը՝ The Holy Bible, New International Version, Copyright © 1973, 1978, 1984 by International Bible Society. NIV Gift and Award Bible, Revised © 2001 by The Zondervan Corporation, Grand Rapids, Michigan: Zondervan Publishing House:

break any of its bones. When they celebrate the Passover, they **must follow** all the regulations» և այլն:

Երբեմն էլ դասական հայերենի ստորադասականը 3-րդ դ. հրամայականի/արգելականի իմաստով գործածված է հունարենի ըղձական եղանակի փոխարեն. հմմտ. «Պատրաստանի ետ՝ և սաէ ցնա. Մի՛ ևս ոք՝ յաւիտեան ի քէն պտո՛ղ կերիցէ» (Մարկոս, 11:14): Հունարեն բնագրում աորիստ ըղձականի ձև է. հմմտ. «**Mēketi** eis ton aiōna ek sou **mēdeis** karpon **phagoi**» – «**Թ՛ն՞ղ այլևս** հավիտյան **ոչ մեկը** քեզնից պտուղ **չուտի**»»:

Ինչ վերաբերում է բարդ ստորադասական նախադասություններում ստորադասական եղանակի կիրառություններին, այստեղ ևս 1-ին և 2-րդ ստորադասականները գործածվում են առանց կերպ-իմաստային որևէ նկատելի տարբերության, բայց 2-րդ ստորադասականն ընդհանուր առմամբ դարձյալ առավել հաճախադեպ է 1-ին ստորադասականի համեմատությամբ: Բերենք միայն որոշ օրինակներ:

«Ա՛յս է հացն, որ յերկնիցն իջեալ է. **զի** որ ուտիցէ ոք ի ամանէ՛ **մի՛ մեռանիցի**» (Յովհ., 6:50): Հունարեն բնագրում **hina** «որպեսզի» շաղկապը հավասարապես վերաբերում է երկու բային միաժամանակ, որոնք դրված են աորիստ ստորադասականի ձևով. հմմտ. «...**hina** tis ex autou **phagē** kai **mē apothanē**» – «...**որպեսզի** որևէ մեկը <որևէ մարդ> սրանից **ուտի** և **չմեռնի**»: Հմմտ. նաև ռուսերեն թարգմանությունը. «...чтобы человек от него вкусил и не умер»: Մինչդեռ հայերենում նախադասության կառուցվածքը մասամբ փոփոխվել է, այնպես որ **զի** «որպեսզի» շաղկապը վերաբերում է միայն **մի՛ մեռանիցի** ձևին. «...**զի** որ ուտիցէ ոք ի ամանէ՛ **մի՛ մեռանիցի**» – «...**որպեսզի**, ով որ ուտի սրանից, **չմեռնի**»: Կամ՝ «Ահա լսեն թէ գո՛յ ցորեան յեգիպտոս. իջէ՛ք անդր, և գնեցէ՛ք մեզ սակաւ մի կերակուր, **զի կեցցուք՝ և մի՛ մեռցուք**» (Ծնունդք, 42:2): Հունարեն բնագրում **կեցցուք** ձևի դիմաց ներկա ստորադասական է, իսկ **մի՛ մեռցուք** ձևի դիմաց՝ աորիստ ստորադասական, բայց երկուսն էլ հայերեն թարգմանված են 2-րդ (կամ աորիստ) ստորադասականի ձևով. հմմտ. «...**hina zōmen** kai **mē apothanōmen**» – «...**որպեսզի ողջ մնանք <ապրենք> և չմեռնենք**»: Կամ՝ «Արթո՛ւն կացէք և աղօթս արարէք՝ **զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն**» (Մատթ., 26:41):

Հունարեն բնագրում *մի՛ անկանիցիք* ձևի դիմաց աորիստ ստորադասական է. հմմտ. «...hina **mē eiselhēte** eis peirasmon» – «...որպեսզի **չընկնեք** փորձության մեջ <...որպեսզի **չգնաք** դեպի փորձություն>»: Կամ՝ «Ասէ՛ցնա կինն. Տէր՛ տո՛ւր ինձ գօրուն գայն, զի մի՛ ծարաւեցից՝ և մի՛ եկից այսր հանել ջուր» (Յովհ., 4:15): Հունարեն բնագրում *մի՛ ծարաւեցից* և *մի՛ եկից* ձևերի դիմաց ներկա ստորադասականի ձևեր են. «...hina **mē dipsō mēde dierchōmai**...» – «...որպեսզի **չծարավեմ** և **չգամ**...»: Մինչդեռ հայերենում, ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ 2-րդ (կամ աորիստ) ստորադասական է կիրառվել: Այսպիսով՝ վերը բերված օրինակները մեկ անգամ ևս հաստատում են, որ արդեն դասական հայերենում 1-ին և 2-րդ ստորադասականների երբեմնի կերպային հակադրությունը այլևս չէր գիտակցվում որպես գործուն քերականական օրինաչափություն, ուստի չէր դրսևորվում հետևողականորեն: Այդ առումով մոտավորապես նույն վիճակն է նաև ժամանակի պարագա երկրորդական և այլ բարդ ստորադասական նախադասությունների դեպքում. հմմտ. մի կողմից՝ «Բայց արդարև՝ ասե՛մ ձեզ, եթէ՛ են ոմանք ի դոցանէ՛ որ այդր կան, որք մի՛ ճաշակեցեն զմահ, **մինչև փեցեն** զարքայութիւն Աստուծոյ» (Դուկաս, 9:27), մյուս կողմից՝ «Ամէն ասե՛մ ձեզ. զի իցեն ոմանք ի սոցանէ՛՝ որ ասր կան. որք ո՛չ ճաշակեցեն զմահ՝ **մինչև փեսանիցեն** զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով» (Մատթ., 16:28): Հունարեն բնագրում *փեցեն* և *փեսանիցեն* ձևերի դիմաց երկու դեպքում էլ աորիստ ստորադասականի միևնույն ձևն է գործածված. «...heōs an idōsin...» – «...մինչև տեսնեն <մինչև չտեսնեն>...». հմմտ. «...legō de hymin alēthōs eisin tines... hoi ou mē geusōntai thanatou **heōs an idōsin** tēn basileian tou theou» – «...բայց ձեզ ճշմարիտ եմ ասում, կան ոմանք... որոնք մահ չեն ճաշակի, **մինչև տեսնեն** <**մինչև չտեսնեն**> Աստծու արքայությունը» և «...amēn legō hymin hoti eisin tines... hoitines ou mē geusōntai thanatou **heōs an idōsin** ton huion tou anthrōpou...» – «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ կան ոմանք... որոնք մահ չեն ճաշակի, **մինչև տեսնեն** <**մինչև չտեսնեն**> մարդու Որդուն...» և այլն:

Եզրակացություններ

Այսպիսով՝ հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականների իմաստային փոխհարաբերությունը որպես եղանակային կամ միաժամանակ որպես եղանակային և կերպային հակադրություն բնորոշելու փորձերը չեն հաստատվում հին հայերենի համաժամանակյա և տարաժամանակյա տվյալներով. չկան բավարար լեզվական փաստեր, որոնք կվկայեին ստորադասականի երկու տիպերի միջև ենթադրյալ եղանակային հակադրության օգտին: Մինչդեռ դասական հայերենում 1-ին և 2-րդ ստորադասականների գրեթե նույնական գործառությունները և նրանց տարաժամանակյա ձևակազմական ընդհանրությունը (միննույն *-ից* հիմքակազմ ածանցի կիրառմամբ) տիպաբանական տվյալների հետ անառարկելիորեն հաստատում են, որ այդ երկու ձևերն իրոք ստորադասականի եղանակային կարգավիճակ ունեն: Ըստ այդմ՝ թեև դասական հայերենում սահմանական ապառնի իմաստն առավել հաճախ դրսևորվում է ստորադասականի, հատկապես՝ 2-րդ ստորադասականի միջոցով, այդուհանդերձ, այն չի կարող դիտվել իբրև ապառնի ժամանակաձև, քանի որ՝ **ա)** 1-ին և 2-րդ ստորադասականները գործառությային տեսանկյունից (բայց ոչ ծագմամբ) հիմնականում համապատասխանում են հնդեվրոպական ստորադասականին, **բ)** ստորադասականի գործածությունը նաև ապառնի ժամանակի նշանակությամբ տիպաբանորեն անսովոր երևույթ չէ:

Աստվածաշնչի բնագրային որոշ օրինակներ կարծես թույլ են տալիս ենթադրել, որ ժխտման դեպքում սկզբնապես նախապատվություն է տրվել անկատար կերպի (1-ին ստորադասականի) ձևին կատարյալ կերպի (2-րդ ստորադասականի) ձևի նկատմամբ: Սակայն հանդիպում են նաև դեպքեր, երբ կերպային առումով նույնատիպ գործողությունները թե՛ դրական և թե՛ ժխտական նշանակությամբ արտահայտված են կա՛մ 1-ին, կա՛մ 2-րդ ստորադասականի միջոցով՝ առանց որևէ իմաստային տարբերության: Հետևաբար եթե նույնիսկ նման տարբերակում հայերենում երբևէ գործել է ժխտական ձևերի դեպքում, դասական հայերենում այդ օրինաչափությունն արդեն մթազնած էր և չէր գիտակցվում որպես այդպիսին: Դասական հայերենում 1-ին և 2-րդ ստորադասականներն սկզբուն-

քորեն կարող են միմյանց փոխարինել գրեթե բոլոր կիրառություններում: Իսկ 1-ին ստորադասականի համեմատաբար ցածր կիրառահաճախականությունը պետք է բացատրել նրա գործառնության սահմանափակման տարաժամանակյա ընդհանուր միտումով: Ոչ միայն բուն ստորադասականի և սահմանական ապառնիի, այլև 3-րդ դ. հրամայականի/արգելականի նշանակությամբ գործառնություններում 2-րդ ստորադասականն առավել հաճախադեպ է, քան 1-ին ստորադասականը: Այդուհանդերձ, 1-ին ստորադասականը նույնպես գործածվում է ոչ միայն արգելանքի (արգելականի), այլև դրական հրահանգի (հրամայականի) իմաստով: Եվ անկախ այն բանից՝ հունարեն բնագրում տվյալ դեպքում ներկա՞ հրամայական, թե՞ աորիստ հրամայական է գործածված, հայերենում մե՛րթ 1-ին ստորադասական է կիրառվում, մե՛րթ էլ՝ 2-րդ ստորադասական՝ առանց իմաստային որևէ նկատելի տարբերության:

Աստվածաշնչում 1-ին և 2-րդ ստորադասականների կիրառությունների համատեքստախմաստային քննությունը որևէ կասկած չի թողնում, որ դրանք սկզբնապես միմյանց հակադրվել են կերպային իմաստով (*անկատար կերպ-կատարյալ կերպ*), և դասական հայերենում այդ կերպային հակադրությունը դեռ հստակ կարելի է տեսնել մի շարք դեպքերում: Մյուս կողմից, սակայն, ակնհայտ է նաև, որ նույնիսկ դասական շրջանում ստորադասական եղանակի դեպքում կերպային հակադրությունն այլևս չէր գիտակցվում որպես գործուն օրինաչափություն, ուստի չէր դրսևորվում հետևողականորեն. շատ հաճախ կերպային առումով նույնատիպ գործողությունները/եղելություններն արտահայտված են մի դեպքում 1-ին, մյուս դեպքում՝ 2-րդ ստորադասականի միջոցով:

Սարգիս Ռ. Ավետյան – ԵՊՀ դոցենտ, հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 40 գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հնդեվրոպական լեզվաբանությունը, լեզվաբանական տիպաբանությունը, հայերենի պատմահամեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը (ներառյալ հին հայերենը, միջին հայերենը, հայերենի բարբառները, արևելահայերենը և արևմտահայերենը):

Էլ. հասցե՝ sargisavetyan@ysu.am

AN EXAMINATION OF USES OF THE OLD ARMENIAN SUBJUNCTIVE MOOD IN THE BIBLE

In comparison with the Greek original

Sargis R. Avetyan

Candidate of Sciences in Philology

Keywords - the present subjunctive, the aorist subjunctive, Classical Armenian, a mood contrast, an aspectual contrast, contextual-semantic analysis, negation, the original situation, diachronic tendency.

It is argued that attempts to characterize the semantic relationship between the two forms of the Subjunctive (the present subjunctive and the aorist subjunctive) in Classical Armenian as either a mood contrast or an aspect-mood contrast are not backed up by the relevant synchronic as well as diachronic linguistic data of Old Armenian. The nearly identical syntactic functions of the two forms of the Subjunctive in Classical Armenian and their diachronically similar morphological structure (owing to the addition of one and the same suffix **-hg* to either the present stem or the aorist stem) along with the relevant typological evidence, leave no doubt that both forms under consideration are actually subjunctive-mood forms. Therefore, although the meaning of the future indicative is more often expressed by the Subjunctive (especially the aorist subjunctive) in Classical Armenian, nevertheless it cannot be viewed as future tense. The present subjunctive and the aorist subjunctive are in principle interchangeable in almost all syntactic functions even in the classical period. As to the difference in the frequency of use of the two forms of the Subjunctive in Classical Armenian, it should be accounted for by the general diachronic tendency for the present subjunctive to get restricted in use and displaced gradually by the aorist subjunctive before both the present subjunctive and the aorist subjunctive were eventually ousted by the new form of the Subjunctive going back to the old present indicative.

A detailed contextual-semantic analysis of the uses of Old Armenian presents subjunctive and aorist subjunctive in Bible, clearly testifies to the original aspectual (imperfective - perfective) contrast between them. However, it is also evident that the aspectual contrast had already ceased to be conceived of as a living grammatical pattern in the case of the Subjunctive in Classical Armenian and

therefore it did not manifest itself in a regular way: from the aspectual point of view identical actions/events were often expressed both by the present subjunctive and the aorist subjunctive. Moreover, they could even occur side by side within one and the same sentence.

Some instances in the Bible text seem to suggest that originally the present subjunctive was preferred to the aorist subjunctive in the case of the negation. However, there are also cases when from the aspectual point of view identical actions/events are expressed either by the present subjunctive or by the aorist subjunctive in positive as well as in negative sentences quite randomly (possibly, due to the original situation having already become obscured).

Резюме

УПОТРЕБЛЕНИЕ СОСЛАГАТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ В ТЕКСТЕ БИБЛИИ

В сравнении с греческим оригиналом

Саргис Р. Аветян
Канд. филол. наук

Ключевые слова - конъюнктив презенс, конъюнктив аорист, классический армянский язык, модальное противопоставление, аспектуальное противопоставление, контекстно-семантический анализ, отрицание, исходное состояние, диахроническая тенденция.

Известно, что попытки охарактеризовать семантическое соотношение между двумя формами сослагательного наклонения (конъюнктив презенсом и конъюнктив аористом) в классическом армянском языке как модальное или аспектуально-модальное противопоставление не поддерживаются соответствующими синхроническими и диахроническими лингвистическими данными древнеармянского языка. Почти идентичные синтаксические функции двух форм сослагательного наклонения в классическом армянском языке и их диахронически одинаковая морфологическая структура (в силу добавления одного и того же суффикса либо к основе презенса, либо к основе аориста) вместе с соответствующими типологическими данными не оставляют сомнений в том, что обе рассматриваемые формы действительно являются формами сослагательного наклонения. Поэтому, несмотря на то, что значение футурума изъявительного

наклонения чаще всего выражается при помощи сослагательного наклонения (особенно конъюнктив аориста), его нельзя рассматривать как форму будущего времени. Конъюнктив презенс и конъюнктив аорист в принципе взаимозаменяемы почти во всех синтаксических функциях, даже в классический период. Что касается различия в частоте употребления этих двух форм в классическом армянском языке, то это должно объясняться общей диахронической тенденцией к ограничению употребления конъюнктив презенса и постепенно заменяться конъюнктив аористом, до того, как конъюнктив презенс и конъюнктив аорист в конце концов были вытеснены новой формой сослагательного наклонения, восходящей к древнему презенсу изъявительного наклонения.

Подробный контекстно-семантический анализ употреблений конъюнктив презенса и конъюнктив аориста в древнеармянском языке в Библии ясно свидетельствует об изначальном аспектуальном (несовершенный вид – совершенный вид) контрасте между ними. Вместе с тем очевидно и то, что в классическом армянском языке аспектуальный контраст уже перестал восприниматься как живая грамматическая закономерность при сослагательном наклонении и потому не проявлялся регулярно: с аспектуальной точки зрения идентичные действия/события часто выражались как при помощи конъюнктив презенса, так и при помощи конъюнктив аориста. Добавим, что они могли даже встречаться рядом в одном и том же предложении.

Некоторые примеры в тексте Библии, похоже, предполагают, что первоначально при отрицании предпочтение отдавалось конъюнктив презенсу. Однако существуют также случаи, когда с аспектуальной точки зрения идентичные действия/события выражаются при помощи либо конъюнктив презенса, либо конъюнктив аориста как в положительных, так и в отрицательных предложениях довольно произвольным образом (возможно, из-за того, что исходное состояние уже затемнилось).

REFERENCES

1. **Abeghyan M.**, Yerker, hat. Z, Yer., HSSH GA hrat., 1974 (**In Armenian**).
2. **Margaryan Al. S.**, Bayi yeghanakneri arzhek'avor usumnasirut'yun, "Banber Yerevani hamalsarani", Yer., 2000, N 1 (100), էջ 92-103 (**In Armenian**).
3. **Abeghyan M.**, Hayots' lezvi tesut'yun, Yer., "Mitk'" hrat., 1965 (**In Armenian**).
4. **Abrahamyan A.**, Grabari dzermark, Yer., "Luys" hrat., 1976 (**In Armenian**).
5. **Acharyan H.**, Liakatar k'erakanut'yun hayots' lezvi, hat. IV, A girk', Yer., HSSH GA hrat., 1959 (**In Armenian**).
6. **Avetisyan H., Ghazaryan R.**, Grabari dzermark, Yer., Yerevani hamals. hrat., 2007 (**In Armenian**).

7. **Avetisyan H.**, Grabari storadasakan yeghanakë yev nra ëmbrnumë hay k'erakanut'yan patmut'yan mej, "Banber Yerevani hamalsarani", Yer., 1985, N 1, ëj 193-204 **(In Armenian)**.
8. **Avetyan S.**, Anglereni zhamanakayin haraberakts'ut'yan kargi yev hayereni voch' iradrakan zhamanaki (yent'a-)kargi zugadrakan k'nnut'yun, "Banber Yerevani hamalsarani", Yer., 2015, N 1 (16), ëj 38-51 **(In Armenian)**.
9. **Avetyan S.**, Dasakan hayerenum storadasakani yerku dzeveri imastagortsarut'ayin p'okhharaberut'yan harts'i shurj, "Patmut'yun yev mshakuyt'", Yer., 2022, N 2, ëj 150-165 **(In Armenian)**.
10. **Awetik'ean G.**, K'erakanut'iwn haykakan, Venetik, hrat. S. Ghazar, 1815 **(In Armenian)**.
11. **Bagraturi A.**, Hayerën k'erakanut'iwn i pëts zargats'elots', Venetik, hrat. S. Ghazar, 1852 **(In Armenian)**.
12. **Ch'alëkhean V., Aytënean A.**, K'erakanut'iwn haykazean lezui handerdz p'op'okhmambk' yew yaweluatsovk', Vienna, Mkhit'arean tparan, 1985 **(In Armenian)**.
13. **Garagashean A. M.**, Gortsnakan k'erakanut'iwn hay lezui, K. Pölis, hrat. Y. Gavafean, 1876 **(In Armenian)**.
14. **Garagashean A. M.**, Hamarot nor k'erakanut'iwn, ughgheal yew yaweleal, K. Pölis, tp. M. Y. P'ap'azean, 1892 **(In Armenian)**.
15. **Hambardzumyan V.**, Grabari dzeñark, Yer., "Edit' Print" hrat., 2018 **(In Armenian)**.
16. **Hovhannisyan L.**, Dasakan grabari bayakan zhamanakneri kirarut'yunë, "Lezvi yev vochi harts'er", pr. III, Yer., hrat. HSSH GA, 1975 **(In Armenian)**.
17. **Khach'atryan L., T'osunyan G.**, Grabari dasagirk', Yer., "Zangak-97" hrat., 2004 **(In Armenian)**.
18. **Sharabkhanyan P.**, Grabari dasagirk', Yer., YEPH hrat., 1974 **(In Armenian)**.